4 տարի շարունակ Թուրքիան Նիկոլ Փաշինյանի եւ նրա իշխանության քթից բռնած ֆռռացնում է՝ համոզելով, որ շուտով սահմանը բացվելու է: Փաշինյանը 4 տարի առաջ հայ-թուրքական սահմանից սկիզբ առնող ճանապարհը նորոգող շինարարներին հորդորում էր արագացնել աշխատանքները, որ երբ սահմանը բացվի, նորոգված ճանապարհ լինի:

Կարդացեք՝ էջ 5

Ես հավատում եմ՝ խաղաղություն հնարավոր է, սակայն այն պաշտպանում են ուժի, պատրաստվածության եւ լուրջ ռազմավարական մտածողությամբ, ոչ թե քաղաքական հայտարարություններով: Պատրաստվածությունն ագրեսիա չէ. մեծագույն սխալը, որ անում է ժողովուրդը, ժամանակավոր հանգստությունը մշտական խաղաղության հետ շփոթելն է:

Կարդացեք՝ էջ 6

Անցավ չարչարանաց 4 շաբաթը, արդեն ակնհայտ է, որ դու գալիս ես՝ քո ժողովրդի կանչով: Ուստի մտածեցի մի քանի մտքերով կիսվել քեզ հետ... Եվ ասելիքս փորձեցի տեղավորել ինը խորհուրդների մեջ, քանզի 9 թիվը ոչ միայն հին աշխարհում, այլ նաեւ հայոց հին տոմարով համարվում է սրբազան: Խնդրում եմ ուշադիր հետեւեմ խոսքիս:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 90 (4225), 5 հունիս, ուրբաթ, 2026

www.hraparak.am

Փաշինյանի հասցեին ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանի կոշտ հայտարարությունից հետո նրա աջակիցների, ընտրողների թիվը, կարելի է ասել, բավականին ավելացել է: ԲՀԿ նախընտրական շտաբի մեր աղբյուրներից տեղեկացանք, որ այդ լեզվակռվից առաջ իրենք փորձել են «հաշվառել» իրենց ունեցած-չունեցած ձայները համայնքներում, բայց հայտարարությունից հետո իրենց համայնքային շտաբների պատասխանատուները կապվել են կենտրոնական շտաբի հետ եւ ասել, որ նախապես փոխանցած հնարավոր ձայների թվերը 50 տոկոսով ավելացել են: Բոլորը միաբերան նշել են, որ պատճառը Ծառուկյանի՝ Փաշինյանի հասցեին արված հայտարարությունն է. «Իրա պատիժը իմ որձ առյուծի մոտ մտնելը պիտի լինի, եթե չապացուցեց, որ շպիոն եմ»: Նա այս խոսքն ասել էր մայիսի 24-ին՝ պատասխանելով Նիկոլ Փաշինյանի մեղադրանքներին, թե նա էլ, Անդրանիկ Թեւանյանի նման, լոտես ու պետական դավաճան է: Այս հայտարարությունից հետո նրանք, ովքեր կասկածում էին, որ հետընտրական փուլում Ծառուկյանը կարող է աջակցել Փաշինյանին՝ իշխանություն կազմելու հարցում, համոզվել են, որ Ծառուկյանը «զադնի չի դնելու», եւ առճակատման գնացած Փաշինյանը եւս դրանում համոզվել է, ու նյարդերը տեղի են տվել:

Սամվել Կարապետյանի առաջնորդած «Ուժեղ Հայաստան» կուսակցության ամփոփիչ հանրահավաքը ՔՊ-ում բուռն աժիոտաժ է առաջացրել: Չնայած իշխանամերձ շրջանակների հաշվարկով Հանրապետության հրապարակում մոտ 20 հազար մարդ է եղել, սակայն, որոշ տեղեկություններով, ԱԱԾ-ն 40 հազարից ավելի թիվ է զեկուցել Նիկոլ Փաշինյանին: Իշխանության ներսում հասկացել են, որ, չնայած տեւական ամիսներ իրենց ձեւավորած վախի մթնոլորտին եւ ընդդիմության հանրահավաքներին մասնակցողներին աշխատանքից հեռացնելու փաստերին, այնուամենայնիվ, ժողովրդի կամքը կոտրել հնարավոր չի եղել: Եվ եթե այսքանից հետո ընդդիմադիր մեկ ուժի հանրահավաքին այդքան մարդ է մասնակցում, ապա կարելի է պատկերացնել, թե միասնական ընդդիմության կազմակերպած փողոցային պայքարի հետեւանքն ինչ կարող է լինել: Սրանով են պայմանավորված իշխանականների եւ նրանց ֆեյքերի անհանգիստ արձագանքը եւ այն, որ կեսգիշերին Փաշինյանն ուժայիններին հրահանգել է՝ լույսը չբացված, խուզարկություններ իրականացնել ընդդիմադիրների տներում: Երեկ, առավոտյան արդեն հայտնի դարձավ, որ 50-ից ավելի ընդդիմադիրների մոտ խուզարկություններ են արվել: 20-ից ավելի մարդ ձերբակալվել է: Ոմանք սա համարում են հոգեվարքի նշան՝ քվեարկությունից 2 օր առաջ:

Վերջ առաջին արարին

Այսօր խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի վերջին օրն է՝ վաղը լռության օր կլինի, իսկ կիրակի օրը մենք կգնանք ընտրատեղամասեր եւ այս նախընտրական տեռորի, ագրեսիվ հռետորաբանության, վախի ու հալածանքների մթնոլորտում կփորձենք ընտրություն կատարել եւ մեր պետության ղեկը հանձնել գրագետ, հավասարակշռված, իրենց երկիրը սիրող հայ մարդկանց: Ինչպիսին էր այս քարոզարշավը՝ փորձենք ամփոփել: Մենք լսեցինք իշխանականների հիստերիկ ճառեր, թեկնածուների փոխադարձ մեղադրանքներ, տեսանք մասնակիցների հուսահատ փորձեր՝ ընտրողի համակրանքը շահելու: Հերթական անգամ համոզվեցինք, որ Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը բոլորովին չեն գիտակցում իրենց պատասխանատվությունը մեր երկրի ու հանրության առջեւ, նաեւ չունեն չափի զգացում, սխալները խոստովանելու քաջություն, մրցակիցներին հարգելու ունակություն: Նրանք գործի էին դրել պետական ողջ ռեպրեսիվ մեքենան՝ մրցակիցներին ճնշելու եւ վախեցնելու համար: «Տղաներ» բերվեցին դրսից՝ հայ ընտրողի վրա հոգեբանորեն ազդելու համար: Կիրառվեցին պետական ընտրակաշառքի բազում մեթոդներ եւ ադմինիստրատիվ լծակներ: Իշխանությունն ամենօրյա ռեժիմով խախտում էր օրենքը, բայց պատժվում էին օրենքի տառը պահպանել փորձող ընդդիմադիրները: Երբեւէ նախընտրական փուլում ընտրապայքարի ելած ուժերի ներկայացուցիչներն այսպես ցուցադրաբար չեն ձերբակալվել ու կալանավորվել, ինչպես կատարվում է ժողովրդավար ու եվրոպամետ Նիկոլ Փաշինյանի ժամանակ՝ 2026 թ. գարնանը: Իհարկե, կարող ենք նաեւ ընդդիմադիրների սխալներն ու թերությունները նշել, բայց դրանք անհամադրելի են իշխանությունների պահվածքի հետ: Կարծում եմ, որ անգամ նրանք, ովքեր դեռ քիչ թե շատ համակրանք ունեին ՔՊ-ի նկատմամբ, այս քարոզարշավի ժամանակ հիմնովին հիասթափվեցին նրանցից:

Նախօրեին «Ուժեղ Հայաստան» կուսակցության բազմամարդ հանրահավաքից հետո տեղեկացանք, որ ընտրատարածքային հանձնաժողովների մի քանի ՔՊ-ական նախագահներ ինքնաբացարկի դիմումներ են ներկայացրել ԸԸՀ-ներ: Հասկանալի պատճառներով, չենք հրապարակում նրանց անունները, սակայն մտերիմներին նրանք պարզաբանել են, որ հանրահավաքը մեծ արձագանք է առաջացրել իշխող թիմում, եւ իրենք էլ մտավախություն ունեն, որ ՔՊ-ն չի անցնի, ուստի ապահովագրում են իրենց: Նշենք, որ ինքնաբացարկի դիմումները փոխանցում են հենց ԸԸՀ-ներին, որոնք նիստ են անում եւ հանձնաժողովում աշխատելու վկայական ունեցող անձանցից ընտրում նոր նախագահներ:

ԿՀԵՌԱՑՆԵՄ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ՝ ՏՂԱՄԱՐԴԱՎԱՐԻ ԱՍՈՒՄ ԵՄ

Կոտայքի մարզպետարանից մեզ տեղեկացրին, որ իրենց ստիպում են ՔՊ-ի օգտին քվեարկել՝ քվեարկության ամբողջ ընթացքը, որպես ապացույց, տեսանկարահանել ու ներկայացնել վերադասին: Մեր աղբյուրի փոխանցմամբ, մարզպետարանը տարբեր չաթեր ունի, մեկում ՔՊ-ական համայնքապետերն են, մյուսում՝ մարզպետարանի վստահելի աշխատակիցները: Բացի դրանից, մեր աղբյուրի փոխանցմամբ, մարզի դպրոցների հետ էլ են ակտիվորեն «աշխատում»՝ պարտադրում քվեարկել ՔՊ-ի օգտին: Կապվեցինք Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանի հետ, որը, բնականաբար, հերքեց տեղեկությունը՝ նշելով, որ իրենք չաթեր չունեն, իրենց աշխատակիցներին ընտրությունների վերաբերյալ ոչինչ չեն ասել: «Ես վստահ գիտեմ, թե մարզպետարանում ով է մեզ ընտրելու, իսկ ով՝ ոչ: 2-3 աշխատակից ունենք, որ վստահ եմ՝ չեն ընտրելու, իրենց հայացքներն էդպիսին են, ու 5 տարի է՝ էդ մարդկանց հետ աշխատում եմ, որովհետեւ պրոֆեսիոնալ են: Եթե կա նման չաթ, ուղարկեք ինձ, եթե ես եմ բացել, ես հրաժարական կտամ իմ պաշտոնից, եթե ուրիշն է բացել, կհեռացնեմ աշխատանքից, տղամարդավարի ասում եմ»: Բացառում եք, որ դպրոցների նկատմամբ եւս պարտադրանք կա, մարզպետը պատասխանեց. «Չեք պատկերացնում, թե ինչքան ստիպելու կարիք չկա, էդ մարդիկ հոժարակամ ընտրելու են, կողմնորոշված են, ինչ ստիպես, ում ստիպես: Եթե ստիպելու դեպք արձանագրեք, ինձ տեղյակ պահեք՝ պատժեմ ստիպողին»:

ԿԱՐԾԻՔ

«Դրապարակի» զրուցակիցը բժիշկ **Արփինե Սողոյանն** է:

- Երեկ Հանրապետության հրապարակում բազմամարդ հանրահավաք էր, ակնհայտ է, որ հանրության զգալի մասը փոփոխություններ է ցանկանում եւ միանշանակ ուզում է ազատվել օրվա իշխանությունից, Փաշինյանի վարած նվաստացուցիչ քաղաքականությունից: Իշխանական արբանյակներն ամեն գնով փորձում են նսեմացնել ընդդիմության հանրահավաքները եւ ներկայացնել, թե փոքրաթիվ մարդիկ են մասնակցել, մարդիկ չեն վստահում ընդդիմադիր ուժերին եւ այլն: Հետաքրքիր է՝ Դուք ինչ եք մտածում այդ հանրահավաքի եւ իշխանության հնչեցրած գնահատականների մասին:

ԵՍ ԿԱՆԳՆԱԾ ԵՄ ԱՅՆ ՈՒԺԵՐԻ ԿՈՂՔԻՆ, ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԵՌԱՑՆԵԼ ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ

Նյութերը՝
Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

- Իշխանությունն ուրիշ ինչ կարող է անել: Ես հենց նոր այդ մասին էի խոսում ինձ մտերիմ մեկի հետ. իշխանությունը մեկ ամիս է՝ քարոզարշավ է իրականացնում, ուրբաթ օրն արդեն քարոզարշավի վերջին օրն է, այս մեկ ամսվա ընթացքում իշխանությունն այդպես էլ ոչ մի ծրագիր չներկայացրեց, ոչ մի ծրագրի մասին այդպես էլ չլսեցինք, սպառնալիքներից, ահաբեկելու խոստումներից, սրան-նրան կզացնելու պատրաստակամությունից բացի իշխանությունը ոչինչ չխոստացավ, փոխարենը՝ այսքան աղետներ բերելուց հետո, պարտությունից ու Արցախը հանձնելուց հետո զարմանք հայտնեցին, թե ինչու չենք զոհվել պատերազմում, ինչու ենք ողջ մնացել եւ դեռ մի բան էլ քննադատում ենք իրենց: Այս իշխանությունից ոչ մի լավ բան պետք չէ սպասել, նրանք գիտակցում են, որ տապալվում են, ու դրանից ցնցումների մեջ է ընկել Նիկոլ Փաշինյանը:

- Գուցե դրական խոստումներ չեն տալիս, բայց փոխարենը ուրիշ խոստումներ են տալիս, օրինակ, այսպես կոչված, անկլավները խոստանում են հանձնել Ադրբեջանին: Դա էլ է խոստում:

- Այո, հայկականության դեմ ցանկացած ծրագիր իրենք կատարելու են, եթե ընտրվեն: Վստահ եմ, որ չեն ընտրվելու, այլ տարբերակ չկա: Նրանց նպատակն «Արեւմտյան Ադրբեջան» ծրագիրն իրականացնելն է: Ես որպե անգամ չեմ կասկածում, որ դա էլ կանեն, ու թեպետ հիստերիայի մեջ են ընկնում, երբ խոսվում է 300 հազար ադրբեջանցիների՝ Հայաստան գալու մասին, սակայն որպես հակադարձում չեն ասում, թե ինչ հստակ քայլեր կձեռնարկեն, եթե Ալիեւը նման խնդիր դնի, իսկ Ալիեւն արդեն իսկ հստակ ասել է, որ Հայաստանում պետք է ադրբեջանցիներ ապրեն, եւ, ի պատասխան այդ ամենին, ինչպե՞ս է հակադարձում իշխանությունը կամ առհասարակ հակադարձո՞ւմ է, թե՝ ոչ: Միայն հիստերիկի նման բղավում են, որ ընդդիմությունն ադրբեջանցիների խոսքերն է կրկնում, ու վերջ, դրանից բացի ոչինչ չեն ասում: Այդ լռությունը շատ լուրջ կասկածների տեղիք է տալիս, որ գուցե Ալիեւի այդ ծրագիրն էլ կիրագործեն, եթե մնացյալ բոլոր ծրագրերն իրագործել են, ի՞նչ կա որ՝ դա էլ կարող են իրագործել, իրենցից հեռու չէ: Եթե Արցախն այդքան հեշտ ուրացան, 300 հազար ադրբեջանցին ի՞նչ է, որ չբերեն: Դա էլ կանեն:

- Բայց, ի՞նչ եք կարծում՝ իշխանությունը կվերարտադրվի՞:

- Իշխանությունը չի վերարտադրվելու, ես չեմ տեսնում երկրորդ տարբերակ: Նրանք պետք է տապալվեն, արդեն տապալված են: Ես կանգնած եմ այն ուժերի կողքին, ովքեր կարող են հեռացնել այսօրվա իշխանությանը, թեպետ հույսեր եմ կապում երկրորդ նախագահի հետ, նա ունի փորձ, մեկ անգամ արդեն երկիրը ճգնաժամային վիճակից հանել է ոտքի, թեպետ այն ժամանակ այս աստիճան ճգնաժամի մեջ չի եղել Հայաստանը: Վստահ եմ, որ նրա մոտ նորից կստացվի….

- Չե՞ք հանդիպել այլեւս Նիկոլ Փաշինյանին, Ձեր նախորդ հանդիպումը մեծ աղմուկ առաջացրեց: Եթե նորից հանդիպեք, կրկին կասե՞ք նրան Ձեր սրտի խոսքը:

- Իհարկե կասեմ, ես այդքան նման եմ վախեցողի: Չեմ հանդիպել այլեւս, բայց եթե առիթ լինի, նորից կասեմ, թե ինչ եմ մտածում: 2020 թվականի նոյեմբերի 9-ից հետո ես մասնակցել եմ ընդդիմադիր բոլոր շարժումներին ու իմ կարծիքը Նիկոլ Փաշինյանի մասին երբեք չեմ թաքցրել ու չեմ թաքցնելու: Այս անգամ ուղղակի ամեն բան ստացվեց շատ ավելի էմոցիոնալ ու բուռն: Ես ոչ մի պատեհ առիթ բաց չեմ թողնելու….

- Փաշինյանը խոստանում է հարուստներին ունեզրկել, օրինակ՝ Գագիկ Ծառուկյանին, նրա առանձնատունը դարձնել ծերերի կենտրոն:

- Իսկ իր կառավարման տարիներին քանի՞ ծերերի կենտրոն է սարքել, ինչո՞վ էր զբաղված ութ տարի շարունակ: Հայտնի միջադեպի ժամանակ, երբ նա մատները մտցնում էր իմ աչքերի մեջ եւ սպառնում էր, ես այդ հարցը տվեցի, ասացի՝ ութ տարի շարունակ ի՞նչ էիք անում, ինչո՞վ էիք զբաղված, այ ողորմելիներ, ի՞նչ սարքեցիք էս երկրի համար՝ քանդելուց, հանձնելուց ու ավերելուց բացի: Իմ նպատակն այն է, որ մեր երկիրը լինի ամուր ու ապահով, հավատացեք, ինձ ուրիշ ոչ մի բան պետք չէ:

- Իսկ աշխատավայրում ամեն բան կարգի՞ն է: Էլ չե՞ն սպառնում Ձեզ:

- Նորմալ է: Թեպետ քաղաքապետն ասել է, որ չի անտեսելու իմ արարքը, սակայն այս պահին դեռ չեն հեռացնելու, տեսնենք, թե հետո ինչ են ուզում անել, չգիտեմ ոչինչ….

18-19 ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԲԱՆԱՎԵՃԸ ՎԵՐԱԾՎԵԼՈՒ ԷՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԲԱԶԱՐԻ

«Դրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Հակոբ Բաղալյանն** է:

- Հանրային հեռուստաընկերության բանավեճը որակել էիք «բղավեճ»: Նախընտրական բանավեճերի շարքն ավարտվում է, հեռուստադիտողը քննադատում է բանավեճի ֆորմատը: Ասում են՝ դա հերթական պրոդիշխանական պրոյեկտն է՝ միտված իշխանության պրոպագանդային: Մասնակիցներին տրամադրում են ընդամենը 30 վայրկյան՝ հարց տալու համար, եւ քանի որ հարցերը, որպես կանոն, ուղղված են իշխանության ներկայացուցիչներին, նրանք անսահմանափակ խոսելու հնարավորություն են ստանում եւ քարոզչության իրականացնում, իսկ ընդդիմադիրները չեն հասցնում փաստարկված հակադարձել: Արդյունքում բանավեճը վերածվել է «բազարի», եւ շատերը չեն էլ դիտում դրանք:

- Նույնիսկ եթե հաղորդման մոդերացիայի հարցը դնենք մի կողմ, հաղորդումն ինքնին բանավեճ չի կարելի անվանել: Հանրային հեռուստաընկերությունը մշտապես եղել է օրվա իշխանության ամբիոնը, սակայն ոչ միայն մնացել է նույն կարգավիճակում, այլեւ դեռ մի բան էլ դարձել է շատ նեղ կուսակցական ամբիոն: Դա անկասկած է: Փորձ են արել բանավեճը կազմակերպել անկողմնակալության տրամաբանության մեջ, սակայն եթե անգամ այս բոլոր հարցերը մի կողմ թողնենք, ապա հաղորդման ձեւաչափը չի կարելի անվանել բանավեճ: Չեն կարող 18-19 քաղաքական ուժ բանավիճել: Բանավեճը կարող է լինել հասկանալի ու առարկայական, եթե մասնակցում է առնվազն 2-3 անձ: Դրանից շատը նշանակում է, որ այդ բանավեճը ձախողված է եւ վերածվելու է աղմուկի: Եվ հենց այստեղ է, որ գալիս է ամենակարեւոր պահը. այդ աղմուկն օգտակար է միմիայն իշխանության համար: Ի վերջո, հենց այդ նույն իշխանությունն է, որ իր դեմ հնչող քննադատությանն ու ընդդիմախոսությանը նման հիվանդագին ձեւով է վերաբերվում ու առհասարակ չի կարողանում հակափաստարկներ բերել: Իշխանությունն ունի դեկլարատիվ մի քանի թեզ, որն անդադար ներկայացնում է: Դրանից այն կողմ ոչինչ անել չի կարողանում: Հաղորդման նման ֆորմատը, բնականաբար, բերելու է աղմուկի: Չեն կարող 18 հոգի խոսել եւ մնալ բովանդակային քննարկումների շրջանակներում:

- Հաղորդավարները «ծակ պրոֆեսորի» կեցվածքով հյուրերի վրա բղավում են՝ «լռեք, լռեք», «անջատեք խոսափողը»: Հնարավոր չէ՞ պրոցեսը փոքր-ինչ գրագետ ձեւով կազմակերպել:

- Անգամ եթե պատկերացնենք ամենաիդեալական մոդերացիայի տարբերակը, միեւնույն է, այդքան ուժ չի կարող արդյունավետ խոսք ասել, հետեւաբար, դա չի կարող համարվել բանավեճ: Նման քննարկումներն անխուսափելիորեն վերածվում են արեւելյան բազարի: Ինքնին խնդիրը հենց ձեւաչափն է: Իհարկե, ես հասկանում եմ, որ Հանրայինն ունի օրենսդրական պատասխանատվություն այս առումով, սակայն դա լրիվ ձեւական է, լղոզված ձեւով օրենքի պահանջ են կատարում, սակայն ոչ մի լավ բան չի տալիս այն հանրությանը: Հանրային օգուտը զրոյական է, այս առումով:

- Բայց բանավեճեր էլ են հարկավոր, ինչպե՞ս պետք է դրանք կազմակերպել:

- Բանավեճ ասելով ես պատկերացնում եմ երկու-երեք ուժի միջեւ քննարկում: Այդ մշակույթը տարածված է ամերիկյան քաղաքականության մեջ, որը ենթադրում է նախագահական համակարգ, բայց անգամ կոնգրեսական համակարգում բանավիճում է երկու ուժ՝ դեմոկրատական եւ հանրապետական, եւ նրանց պարագայում անգամ աղմուկը կարող է օգտակարություն պարունակել, քանի որ երկու անձի աղմուկը չի կարող հանրությանն այնպիսի մեծ շփոթության մեջ գցել, որ մարդիկ չզանազանեն խոսքերը, ծրագրերը եւ այլն: Եթե անգամ 18-19 ուժերը չաղմկեն էլ, ապա հնարավոր չէ այդ բազմության մեջ ստանալ առարկայական քննարկում:

«Պիլոտկան փոխել է»՝ միացել հեղափոխականներին

Սեւանի բնակիչները զարմացել են, որ Սեւանի քաղաքապետարանի աշխատակազմի նախկին քարտուղար Սուսաննա Խաչատրյանը Սեւանում նախընտրական քարոզչություն անող Նիկոլ Փաշինյանին գրկաբաց եւ անափ ուրախությամբ դիմավորել է՝ ողջագուրվել նրա հետ: Սեւանցիներն ասում են, որ այդ կնոջ «լավ ապրելու» լավագույն շրջանը եղել է Ռոբերտ Քոչարյանի նախագահության տարիները, հիմա ջերմ ողջագուրվում է Նիկոլ Փաշինյանի հետ, նրա ասում՝ «ցավդ տանեմ»: Ս. Խաչատրյանը խորհրդային տարիներից եղել է ղեկավար պաշտոններում՝ Սեւանի քաղխորհրդի գործկոմի քարտուղար, հետո՝ 1990-ականների երկրորդ կեսին, 2000-ականներին՝ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար: Նախկիններից ամենանախկին Սուսաննա Խաչատրյանը, սեւանցիների խոսքով՝ «պիլոտկան փոխել է», անցել հեղափոխականների կողմը:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՄՍԻՀՇ

ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐԸ ՅԱՆԿԱԼԻ ԷՖԵԿՏ ՉԵՆ ՏԱԼԻՍ. ՄԱՐԴԻԿ ԱՅԼԵՎՍ ՉԵՆ ՎԱԽԵՆՈՒՄ

Սամվել Կարապետյանի առաջնորդած «Ուժեղ Հայաստանի» ամփոփիչ հանրահավաքը մեծ արձագանք է գտել իշխանական եւ իշխանամերձ շրջանակներում: Չնայած իշխանության պատժիչ գործիքակազմի կիրառմանը եւ վախի մթնոլորտին, որոնք այս ամիսներին ձերբակալությունների միջոցով փորձել է հաստատել Նիկոլ Փաշինյանը, Հանրապետության հրապարակի բազմամարդ հանրահավաքով ընդդիմադիր ուժը, ըստ տարբեր գնահատականների, ապացուցեց, որ Հայաստանում փոփոխությունների պահանջ է ձեւավորվել: Սրբազան պայքարից հետո այն ամենաբազմամարդ հանրահավաքն էր, որը, ի դեպ, հիշեցնում էր 2021-ի նախընտրական հավաքը՝ Ռոբերտ Քոչարյանի կողմից հրավիրված:

Թե նախընտրական հանրահավաքներն ու քարոզարշավն ընտրական պրոցեսի վրա ինչ ազդեցություն են գործում՝ զրուցեցինք քաղաքագետ **Հրանտ-Մելիք Շահնազարյանի** հետ: Նրա գնահատմամբ՝ նախօրեի հանրահավաքն ընդդիմադիր ուժի՝ մեկ տարուց ավելի իրականացրած քաղաքականության կուլմինացիան էր, որը կարելի է հաջողված համարել: Փաստորեն, տեւական պասիվությունից հետո մենք ազդեցիկ հանրահավաքի ականատես եղանք, ինչի վառ ապացույցն էին նաեւ դրան հաջորդած խուզարկություններն ու ձերբակալությունները. «Իշխանությունը երեկվա հանրահավաքից հասկացավ, որ նախորդ շրջանում իր իրականացրած հետապնդումներն ու ճնշումներն իրենց համար ցանկալի էֆեկտ չեն տվել, եւ մարդիկ շարունակում են աշխատել, չվախենալ գալ հանրահավաքի: Թերեւս այս պատճառով է, որ հանրահավաքից ժամեր անց՝ հաջորդ օրը, որոշեց, որ լրացուցիչ գործիքակազմ կիրառի, որ մարդիկ ընտրություններին չմասնակցեն, հեռու մնան ընտրական գործընթացից եւ չկարողանան իրավիճակ փոխել ընտրությունների միջոցով»:

Չնայած նախկինում էլ ենք ընդդիմադիրների կազմակերպմամբ նման բազմամարդ հանրահավաքների ականատես եղել, եւ ընտրությունների արդյունքներն էլ ոչ թե հանրահավաքով, այլ քվեախցիկի ներսում են որոշվում, քաղաքագետը կարեւորում է, որ, անկախ ձեւավորված բիրտ միջավայրից, մարդիկ պատրաստ են պայքարի. «Հանրահավաքը ցույց տվեց տրամադրությունները, եւ ընդհանուր որոշում, որ կա հասարակության մոտ, դա փոփոխությունների որոշումն է: Ես համոզված եմ, որ, նախ, Նիկոլ Փաշինյանն այլեւս չունի հանրության աջակցությունը, ինքը վաղուց դա անվերադարձ կորցրել է: Երկրորդ համոզմունքս էլ այն է, որ Նիկոլ Փաշինյանն իշխանությունը պահելու հարցում այլեւս չի հենվում ժողովրդական աջակցության վրա, նա այլ գործիքներով է փորձելու մեծամասնության հասնել՝ ճնշումներ, վախի մթնոլորտ: Գյուղերից տեղեկություններ են ինձ փոխանցում, որ դպրոցի տնօրենները կամ վարչական ռեսուրս ունեցող այլ անձինք, իմանալով, որ այս կամ այն մարդը չի քվեարկելու Փաշինյանի օգտին, հորդորում են նրան ընդհանրապես չմասնակցել ընտրությանը: Հետեւաբար, այո, Փաշինյանը կորցրել է հանրային աջակցությունը, եւ երեկվա հանրահավաքն էլ դրա ապացույցներից մեկն է»:

Քաղաքագետի խոսքով՝ լավ է, որ հանրության մեծ մասը կողմնորոշվել է Սամվել Կարապետյանի օգտին. «Նոր ուժ է, մոտեցումներն ու խոստումներն էլ այնքան ծայրահեղական չեն, որ հանրության համար ընդունելի չլինեն, հանրահավաքը նաեւ ընդդիմադիր հիմնական տրամադրվածության կողմնորոշման ցուցիչն էր: Իհարկե, այլ ընդդիմադիր ուժեր էլ շեմը կհաղթահարեն, բայց համոզված եմ, որ առաջատարը հենց այս ուժն է»:

Հարցրինք ընդհանուր նախընտրական քարոզարշավի ընթացքի եւ ընտրողի վրա ազդեցության մասին՝ արդյոք ֆավորիտ ընդդիմադիրների նկատմամբ հանրության վերաբերմունքից կարելի է եզրահանգել ընդդիմության միասնական հաղթանակի մասին: «Քարոզարշավից դժվար է նման կանխատեսում անելը, բայց ես չէի ասի նաեւ, որ մեր ընդդիմությունը լավագույն քարոզարշավն իրականացրեց: Ավելին ասեմ՝ թերություններն ու բացթողումներն ավելի շատ են, քան կարելի էր սպասել»: Անգամ եթե համեմատում ենք սկանդալներով ուղեկցվող իշխանության քարոզարշավի՞ հետ: «Եթե համեմատում ենք իրավիճակի պահանջներին, որում հայտնվել ենք: Հաճախ ընդդիմությունը ստեղծված իրավիճակին ոչ համարժեք մոտեցումներ է դրսեւորում, որոնք չեն առնչվում խնդիրների լուծմանը, որոնք ծառացած են մեր երկրի, փրկության առջեւ: Սրություն չկա, պայքարի մթնոլորտ, որպես այդպիսին, շատ ուշ զգացվեց՝ վերջին երկու-երեք օրերին»: Բայց արդյոք դժվար չէ՞ ՔՊ-ին համարժեք ցածրակարգ քարոզարշավ իրականացնելը: «Ցանկացած իշխանության դեմ պայքարելը դժվար է, մանավանդ որ երկար տարիների անհաջողություն ես ունեցել, բայց այդ ամենը հաշվի առնելով՝ պետք է փորձել: Սա մեղադրանք չէ, ցանկություն է, որ եթե որոշումն այն է, որ ընտրությունների միջոցով պետք է իշխանություն փոխել, ուրեմն շատ ավելի սուր, անզիջում, հետեւողական պայքար է պետք մղել: Խոսքը նույն լեքսիկոնի կիրառումը չէ, ինչ իշխանությունն է անում՝ դրա անհրաժեշտությունը չկա, ճիշտ հակառակը՝ ընդդիմությունն այս առումով շահեկանորեն տարբերվում է իշխանությունից, որովհետեւ պատասխանատու է իր խոսքի համար, պետության եւ ժողովրդի հանդեպ հարգանք է դրսեւորում, եւ շատ կարեւոր է, որ ընդդիմությունը չիջավ իշխանության մակարդակին, ես ավելի հետեւողական աշխատանքի մասին էի նշում, շեշտադրության փոփոխություններ, իհարկե, այս պահին արդեն կան, բայց՝ մի փոքր ուշացած»:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

50 ՄԼՆ ԵՎՐՈՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ 5 ՏՈԿՈՍՆ Է ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ

Կանխազգալով սեփական վարկանիշի աղետալի անկումը՝ հայկական բերքուբարիքի մուտքը ՌԴ արգելելու հետ կապված, Փաշինյանն աջ ու ձախ խոստումներ է շռայլում: Վարդն ու բանջարեղենը, ըստ նրա, արդեն ուղարկվում են այլ երկրներ, իսկ պղպեղի ու փչացած ապրանքի փողն ինքն է տալու: «Բիբար է փչանում, էդ բիբարի փողը կտամ ես, վարդն է փչանում՝ փողը ես կտամ, բիբարին ես տեր կկանգնեմ, դուք խաղաղությանը տեր կանգնեք»,- նախընտրական ելույթներ է ունենում նա՝ բաց տեքստով ընտրակաշառք առաջարկելով, ինչն այս փուլում թեկնածուի կողմից քրեորեն պատժելի արարք կատարել է նշանակում:

Փաստորեն, Փաշինյանի համար խաղաղությունը «բիբարին» համարժեք մի բան է:

Երեկ էլ՝ կառավարության նիստի ժամանակ «փող տալու» առաջին ակցիան կազմակերպվեց՝ որոշում ընդունվեց պտուղ-բանջարեղեն ու ծաղիկ արտահանողներին փոխհատուցում տրամադրել՝ այլ երկրների շուկաներում մրցունակություն ապահովելու նպատակով: Ըստ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանի, սահմանաչափերը հետեւյալն են. ելակի յուրաքանչյուր 1 կգ-ի համար՝ 770 դրամ փոխհատուցում կվճարի պետությունը, լոլիկի յուրաքանչյուր 1 կգ-ի համար՝ 275, պղպեղի համար՝ 400, ծաղիկի յուրաքանչյուր 1 հատի համար՝ 37 դրամ: Առայժմ աջակցությունը տրամադրվելու է 1 ամիս: Հայտարարվում է, որ հետագայում գուցե երկարացվի: Բայց պարզ է, որ ընտրություններից 2 օր առաջ փորձում են իրավիճակը շտկել:

Ծրագիրը տարածվում է միայն նրանց վրա, ովքեր 2026 թ. հունիսի 1-ից մինչեւ հուլիսի 1-ն արտադրանք են արտահանել ՀՀ տարածքից: Փոխհատուցում ստանալու համար տնտեսվարողները պետք է դիմեն էկոնոմիկայի նախարարություն, ներկայացնեն հայտարարագրերն ու հաշիվ-ապրանքագրերը: Կառավարությունը հաշվել է, որ այսկերպ հունիսի ընթացքում կարտահանվեն ավելի քան 4 հազար 250 տոննա բանջարեղեն եւ ելակ, ինչպես նաեւ՝ շուրջ 10 մլն հատ ծաղիկ: Ընդ որում, բավականին հեռավոր գյուղատնտեսական երկրներ, օրինակ՝ Մեծ Բրիտանիա, Կանադա, ԵՄ երկրներ:

Որքանո՞վ է իրատեսական այս ծրագիրը, կարո՞ղ են արդյոք այսկերպ փրկել օր-օրի սնանկացող արտահանողին: ՀՀ նախկին վարչապետ **Հրանտ Բագրատյանը** սառը ջուր է լցնում կառավարության գլխին: «Հրապարակի» հետ զրույցում նա վստահեցնում է, որ նման արտահանում տեղի չի ունենա, եւ խոստանում է. «Եթե մեկը կարողանա 10 կիլոգրամ սոխ տանել, վաճառել Եվրոպայում, ես նրան պրեմիա կտամ»: Ինչո՞ւ: «Բացատրում եմ. արտահանման աջակցությունը տրվում է, երբ որ ապրանքը հատում է երկրի մաքսային սահմանը եւ ներկայացվում է վճարող մարմնին, տվյալ դեպքում՝ ֆինանսների նախարարությանը, որ այդ արտահանումը տեղի է ունեցել: Ես ծաղիկ կամ բանջարեղեն, կամ մրգեղեն արտահանելու այլ երկիր Ռուսաստանից բացի չեմ տեսնում, որովհետեւ մեր բոլոր 4 հարեւանները, որպես կանոն, մասնագիտացված են նման արտահանումների մեջ: Ռուսաստանին փոխարինող միակ շուկան Եվրոպական Միության շուկան է, որտեղ մեզ չեն թողնի, քանի որ այդ ապրանքները ֆիտոսանիտարական վերահսկողություն չեն անցել: Հետեւաբար, այդ փոխհատուցումները չեն լինելու՝ այն պարզ պատճառով, որ արտահանման փաստերը, այդ իրադարձությունները չեն լինելու: Եվ, ուրեմն, դա պրոպագանդիստական տրյուկ է՝ ընտրություններից երկու օր առաջ: Այսինքն՝ որպեսզի ես ելակի արտահանումը փոխհատուցեմ, այդ ելակը պետք է դուրս գա սահմանից, բայց որպեսզի ելակը սահմանից դուրս գա, պետք է այն գնալու տեղ ունենա: Գնալու տեղ չկա: Այնպես որ, հանգիստ կարող են այդ սուբսիդիաները, պետական «պրեմիաները» նախատեսել, որովհետեւ, միեւնույն է, ոչ ոք ոչինչ չի արտահանելու»:

Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի հայտարարության կապակցությամբ, որ ԵՄ-ն Հայաստանին 50 մլն եվրո աջակցություն է տրամադրում՝ գյուղմթերքի հետ կապված խնդիրը լուծելու համար, նախկին վարչապետն ասում է. «Այդ 50 մլն եվրոն Ռուսաստան արտահանվող ծաղիկների, ելակի, բանջարեղենի 5 տոկոսը չի կազմում: Ռուսաստան են գնում 1 միլիարդի ծաղիկ ու բանջարեղեն: Հետեւապես, սա կինո է, եւ այս կինոն հենց հիմա ցույց են տալիս, որ ընտրություններից առաջ հասցնեն փրկել իշխանությանը: Չէ՞ որ մարդկանց 90 տոկոսը հասկանում է, որ այդ ամենի մեղավորը Նիկոլ Փաշինյանն է: Եվ հիմա փորձում են ինչ-որ փշրանքներ փրկել, որ Փաշինյանը որոշ քվեներ ստանա»:

Բագրատյանը հիշեցնում է նաեւ Ռուսաստանի փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկի հայտարարությունն այն մասին, որ չեն ֆինանսավորի Հայաստանին, որը պատրաստվում է Ռուսաստանի Դաշնության դեմ պատերազմել: «Նա ճիշտ է ասում՝ մենք չենք գնում Եվրամիություն, մենք ստորագրում ենք, որ գնում ենք միանալու Ուկրաինային, որ պատերազմենք Ռուսաստանի դեմ, քանի որ դա Եվրամիության պահանջն է: Ինչպես հայտնի է, Եվրոպան պատերազմ է ուզում հայտարարել Ռուսաստանին՝ 2029-2030 թվերին: Իրենք ասում են, որ իբրեւ թե Ռուսաստանն է հարձակվում իրենց վրա»,- ասում է Հրանտ Բագրատյանը:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԿԵՂ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՉ ԸՆՏՐԱԿԵՂԾԻՔՆԵՐՈՎ Է ԱՅՍ ԱՆԳԱՄ ԷԼ ՎԵՐԱՐՏԱԴՐՎԵԼՈՒ

«Քաղաքացիական պայմանագիր» կոչված չարիքը 2021թ. խորհրդարանական ընտրություններում, կարծում եմ, ընտրակեղծիքների եւ այլ ընտրախախտումների միջոցով է խորհրդարանում մեծամասնություն ստացել եւ, դատելով տարբեր փաստերից, նույնն էլ պատրաստվում է անել հունիսի 7-ին: Ինչ փաստեր կան նման հայտարարության եւ եզրակացության համար:

«Հարգելի հայրենակիցներ, հարցս ուղղված է ընդդիմադիր ուժերին: Խնդրում եմ հաշվի առնել, որ ես ասածիս վկան եմ անձամբ: 2021 թ. ընտրություններում իշխանության կեղծարարությունը բացահայտել ենք հենց գրանցամատյաններում: Հետեւաբար, պահանջում եմ ընդդիմադիր ուժերի վստահված անձանց՝ ամենասկզբից ամբողջությամբ ստուգել գրանցամատյանը, քանի որ կարող են լինել մեծ քանակությամբ կրկնակի թերթեր: Նույն անուն-ազգանունով, նույն հերթականությունով կրկնաթերթիկներ»,- հունիսի 2-ին ֆեյսբուքյան իր էջում գրել է (https://www.facebook.com/tigran.chobanyan.10/posts/pfbid028deCZBXhYPKL3NrZecpLUsargz4dD49P6L7CgAmyudFbdj4tLtyj9b7nNWdFprpcl) «Հայոց ազգային գվարդիա»-ի խորհրդի անդամ Տիգրան Չոբանյանը:

Հավելենք, որ 2021թ. ընտրություններում բազմաթիվ ընտրատեղամասերի գրանցամատյաններում եղել են կրկնակի թերթեր, ոչ թե ընդամենը մեկ տեղամասի, որը «Հայաստան» դաշինքի ներկայացուցիչ Արամ Վարդեւանյանը ներկայացրել է ՍԴ-ում ընտրությունների արդյունքները վիճարկելիս, սակայն Տիգրան Մուկուչյանը, ինչպես ասում են, «լղոզելով» անցել է դրա վրայով՝ ինչ-որ անհեթեթ պատճառաբանություն ներկայացնելով, թե դա, հավանաբար, տպիչի («պրինտերի») թերության հետեւանքով առաջացած վրիպակ է:

Ընդգծենք, որ մեր երկրում ընտրողների ցուցակներում տարիներ շարունակ արձանագրվում է ընտրողների թվաքանակի անընդհատ եւ արհեստական աճ, ընդ որում, մեծ աճ է գրանցվել հատկապես 2021թ. արտահերթ ընտրություններում: Ահավասիկ. 1991թ. սեպտեմբերի 21-ին՝ Անկախության հանրաքվեի ժամանակ, ընտրողների ընդհանուր թիվը կազմել է 2 միլիոն 58 հազար: 1995թ. սահմանադրական առաջին հանրաքվեի ժամանակ Հայաստանի բնակչության պաշտոնական թիվը 3 մլն 753 հազար է եղել, ընտրելու իրավունք ունեցողների թիվը, չնայած 1991-1995 թթ. ընթացքում գրանցված մեծ արտագաղթին, հասել է 2 մլն 189 հազարի: 20 տարի անց՝ 2015թ. դրությամբ, Հայաստանի բնակչությունը, ըստ պաշտոնական վիճակագրության, նվազել է 726 հազար մարդով, մինչդեռ ընտրելու իրավունք ունեցողների թիվն ավելացել է 338 հազարով՝ հասնելով 2 մլն 527 հազարի: Իսկ արդեն 2021թ., երբ բնակչության թվաքանակը կազմել է ընդամենը 2 մլն 963 հազար, այսինքն՝ 1995թ. համեմատությամբ նվազել է 790 հազարով, ընտրողների թիվը, ով «հրաշք», կազմել է 2 մլն 595 հազար, եւ սա՝ այն դեպքում, երբ ցուցակներն իբր զտվում էին մահացածներից, քաղաքացիությունից հրաժարվածներից եւ այլն:

Եթե անգամ հիմք ընդունենք, որ կյանքի միջին տեւողությունը Հայաստանում պաշտոնապես 77,7 տարեկանն է, եւ ընդհանուր թվից հանենք միայն 18 տարին դեռեւս չլրացած անձանց (նույնիսկ չհաշվենք անգործունակ ճանաչվածներին, ծանր եւ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտված ու պատիժը կրողներին եւ այլն), որոնք կազմում են բնակչության 21 տոկոսը, ապա 2021-ին լավագույն դեպքում կարող էինք ունենալ ընդամենը 2 մլն 279 հազար ընտրող, բայց ոչ երբեք 2 մլն 595 հազար: Սրանով, թերեւս, ամեն ինչ ասված է, բայց շարունակենք:

Ստացվում է, որ Հայաստանում բնակչության առնվազն 87,4 տոկոսը ներգրավված է ընտրական ցուցակներում՝ ընտրելու իրավունք ունեցողներ են, ինչը եզակի ցուցանիշ է համաշխարհային պրակտիկայում եւ անբնականորեն գերազանցում է նույնական ընտրական ցենզ ունեցող երկրների միջին ցուցանիշը՝ մոտ 72 տոկոսը: Օրինակ, Էստոնիայում նույն տարիքային ցենզի դեպքում, 1 մլն 370 հազար բնակչության պայմաններում ընտրական ցուցակներում ընդգրկված է եղել 974 հազար մարդ՝ բնակչության ընդհանուր թվի ընդամենը 71,1 տոկոսը: Գերմանիայում 83 մլն 289 հազար բնակչից ընտրական իրավունք ունեցողները 72,5 տոկոսն են կամ 60 մլն 420 հազար մարդ: Անգամ Բելառուսում ընտրական ցուցակում ընդգրկված է բնակչության ընդամենը 74,5 տոկոսը: Թվերն ինքնին խոսուն են...

Ընդ որում, հայաստանյան ցուցանիշներից բխում է, որ որպեսզի բնակչության ընդհանուր թվից 2 մլն 595 հազար (առնվազն 87,4 տոկոսը) ընտրական իրավունք ունեցող լինի, ապա ընտրելու իրավունք պետք է ունենային ոչ թե 18, այլ արդեն 12 տարեկանից:

Այսպիսով՝ անգամ ամենակոպիտ հաշվարկով ավելի քան 300 հազար մարդ ապօրինի ներառված է ընտրական իրավունք ունեցող անձանց ցուցակներում: Հայաստանում ընտրացուցակի հետ կապված ցուցանիշներն այն աստիճանի են շեղված, որ առանց տվյալ փաստի հաշվառման, գրեթե բացառված է, որ որեւէ դիտորդական առաքելություն բացահայտի առաջիկայում հնարավոր իրականությունը: Այսինքն՝ չնայած Նիկոլ հայադավի եւ ՔՊ-ի ներկայիս խայտառակ ցածր վարկանիշին, այդ ինչպես, ի՞նչ մանիպուլյատիվ հնարքների, ընտրակեղծիքների շնորհիվ ստացվեց, որ ՔՊ-ն ստացավ քվեների մեծամասնությունը: Անաչառ դիտորդներին լավագույն դեպքում կհաջողվի հետեւողականորեն արձանագրել տարաբնույթ խախտումներ՝ փոշիացնելով եղած սուղ հնարավորությունները, մինչդեռ հնարավոր ու սպասելի խախտումները կամ ընտրակեղծարարությունը կարող են լինել նաեւ բոլորովին այլ հարթությամբ:

Ընտրողների թվաքանակն ընտրակեղծիքների համար ինքնին նպաստավոր միջավայր է, քանզի այն հնարավորություն է տալիս կազմակերպելու քվեարկություններ՝ գոյություն չունեցող անձանց անունից: Դա կարող է իրացվել կեղծ անձնագրերի միջոցով, ընդ որում, միեւնույն անձը կարող է մի քանի անձնագիր շրջանառության մեջ դնել տարբեր տեղամասերում:

Եվ այն, որ Նիկոլի ու ՔՊ-ի խիստ ցածր վարկանիշի պայմաններում նրանք խիստ ինքնավստահորեն հայտարարում են, թե առաջիկա ընտրություններում հաղթելու են՝ ոչ միայն խորհրդարան են մտնելու, այլեւ մեծամասնություն են ունենալու, բացատրվում է հենց սրանով:

Իսկ ինչո՞ւ չհավակնեն եւ չհայտարարեն, եթե Նիկոլ Փաշինյանի ընկերը՝ «Հայկական ժամանակ» թերթի երբեմնի լրագրող Վահագն Հովակիմյանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնին է հայտնվել հանցագործությամբ, իսկ երկակի ստանդարտներով առաջնորդվող Հայաստանի «իրավապահ» համակարգի քաղաքական կամակատարներն աչք են փակել տվյալ փաստի վրա, չնայած մամուլում այդ մասին միանգամայն հիմնավոր, փաստերով եւ իրավական փաստարկներով հրապարակված հանցագործության մասին հաղորդմանը:

Արթուր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Շարունակելի

8 ՏԱՐՎԱ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՈՉ ՄԻԱՅՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ, ՏԱՐՐԱԿԱՆ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԷԼ ՉԳԻՏԻ

Տավուշի մարզում քարոզչություն անելիս Նիկոլ Փաշինյանը, որպես իր իշխանության ձեռքբերում, ներկայացրել է մարզի սահմանամերձ գյուղերում պետական աջակցությամբ, վարկային միջոցներով կառուցված առանձնատները: Մայիսի 30-ին Իջեւան համայնքի Սեւքար գյուղում նախընտրական քարոզչության ժամանակ նա հայտարարել է. «Ուրախ ենք, որ էս նախընտրական քարոզարշավն անցնում ա բոլորովին ուրիշ տրամադրությամբ, քան մենք նախկինում ունեցել ենք: Եվ շատ կարեւոր եմ համարում արձանագրել, թե ինչով ենք մենք եկել ձեզ մոտ այս նախընտրական քարոզարշավին: Սեւքարում մասնավորապես 197 տուն է հաստատված՝ 16 միլիոնի ծրագրով: Եվ, ընդհանրապես, Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերում այս պահին 1931 տուն է կառուցվում՝ 16 միլիոն դրամի ծրագրով, եւ ըստ էության մենք արձանագրում ենք հետեւյալը՝ 60 հատ 9 հարկանի շենք ա, որ կառուցվում ա այս պահին՝ պետական բյուջեի հաշվին»:

Ն. Փաշինյանը «Երեկոն Շանթում» հաղորդման ժամանակ էլ ասել է, որ դպրոցում իր սիրած առարկան աշխարհագրությունն է եղել, ինքը մաթեմատիկայի հետ կապված խնդիրներ է ունեցել: Բայց պարզվում է՝ նա ոչ միայն մաթեմատիկայի, այլեւ՝ տարրական թվաբանության հետ կապված խնդիրներ ունի: Ենթադրենք, որ նրա նշած 9 հարկանի բնակելի շենքերը մեկ մուտքով են, ավելի փոքր թվով բնակարաններով: Մեկ հարկում կա 6 բնակարան, 9 հարկանի շենքում՝ 54: 60 հատ 9 հարկանի շենքում բնակարանների թիվը կլինի 3 հազար 240: Տավուշում կառուցվում է 1931 տուն, 3 հազար 240-ը շատ մեծ է 1931-ից: 8 տարի վարչապետի պաշտոնում գտնվածը դա չգիտի, Սեւքարում նա սխալ տեղեկություն է հայտնել: Տավուշի սահմանամերձ գոտու բնակիչներից բազում բողոքներ եմ ստացել, որ պետական աջակցությամբ բնակարանաշինության այդ ծրագիրը բանկերի միջոցով է իրականացվել, այդ պատճառով տնազուրկ, սակայն վարկային վատ պատմություն ունեցող շատ ընտանիքներ չեն կարողացել օգտվել ծրագրից:

Իջեւանի սահմանամերձ Այգեհովիտ գյուղի բնակչուհին ինձ հայտնեց, որ 5 երեխայի մայր է, տուն չունի, իրենց ընտանիքի վարկային վատ պատմության պատճառով չեն կարողացել օգտվել ծրագրից, սակայն ուրիշ տեղերում ապրող բանկային աշխատողներն այդ ծրագրով Այգեհովիտում տներ են կառուցել: Այդ ծրագրով կառուցված՝ բանկային աշխատողների առանձնատներ կան Կիրանցում, Կողբում, Տավուշի սահմանամերձ այլ գյուղերում: Սահմանամերձ Սարիգյուղում երեւանցիներն այդ ծրագրով 5 տուն են սարքել, սարիգյուղացիներն այդ մարդկանց դեմքով չեն ճանաչում: Այլ տեղերի բնակիչները սահմանամերձ գյուղերում նշված ծրագրով տները կառուցել են որպես ամառանոցներ: Սահմանամերձ Բերքաբերում այդ ծրագրով հաստատվել է 98 տան շինարարություն, որից միայն 20-ն է այժմ կառուցված, քչերը՝ բնակեցված: Բերքաբերից հայտնեցին, որ այդ 98 տների մեծամասնությունը պատկանում է արմատներով Բերքաբերից կամ գյուղի հետ բարեկամական կապեր ունեցող Իջեւանի, Երեւանի, այլ բնակավայրերի բնակիչներին: Մայիսի 14-ին Տավուշի մարզպետարան տեղեկատվական հարցում եմ արել. «16 եւ 21 միլիոն դրամ արժեքով որքա՞ն առանձնատուն է կառուցվել, դրանցից քանիսի՞ շինարարությունն է ընթացքի մեջ, այդ տներից քանի՞սն է այժմ փաստացի բնակեցված, մարզի որ համայնքում քանի տուն է կառուցվում»:

Տավուշի մարզպետարանից պատասխանել են. «Առաջարկում ենք դիմել Իջեւանի, Նոյեմբերյանի, Բերդի համայնքապետարաններին կամ լիազոր պետական մարմնին»: Տավուշի մարզպետարանը պետք է հայտներ, թե որն է այդ խնդրով պետական լիազոր մարմինը: Ինչպե՞ս է ստացվել, որ վարչապետ Փաշինյանը հպարտանում է Տավուշի մարզում պետական, վարկային աջակցությամբ կառուցված տներով, իսկ կառավարության տարածքային ստորաբաժանում հանդիսացող Տավուշի մարզպետարանում մարզում այդ ծրագրի իրականացման վերաբերյալ տվյալներ չունեն:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԱՀՄԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՇՈՒՆ Է, ԲԱՅՑ՝ ԱՆԱՏԱՄ

Դեռեւս ԱԺ նախագահ աշխատող Ալեն Սիմոնյանը Ռուսաստանը համեմատում է այն շան հետ, որը պառկել է խոտի դեզի վրա, ինքը խոտ չի ուտում եւ ուրիշներին էլ թույլ չի տալիս, որ ուտեն: Խոտն այս դեպքում Հայաստանն է, որին ուզում են ուտել թուրքերն ու ադրբեջանցիները, հանքահումքային ռեսուրսները՝ ամերիկացիները, բայց շունը, չգիտես ինչու, նրանց խանգարում է: Սիմոնյանը դա ասում է «Հարավկովկասյան երկաթուղիներ» ընկերության կոնտեքստում, երբ ընկերությունը կառավարող «Ռուսական երկաթուղիներ» ընկերությունը հրաժարվում է ներդրումներ անելուց եւ ուրիշներին էլ չի թողնում: Սիմոնյանը չի բացառում, որ Հայաստանը Ռուսաստանից վերցնելու է երկաթուղու կառավարման կոնցեսիան: Սիմոնյանը եւ մյուսները համոզված են, որ թեեւ Ռուսաստանը շուն է, հաչում է, բայց հաստատ կծելու ընդունակությունը կորցրել է:

Մեկ այլ ՔՊ-ական քարոզիչ հայտարարում էր, որ ռուսներից պետք է խլել՝ ազգայնացնել «Գազպրոմ Արմենիան», ռուսներից, հավանաբար, ուզում են խլել նաեւ նրանց կողմից կառավարվող այլ ընկերություններ ու սեփականություն, որովհետեւ ախորժակը խլելուց է բացվում, իսկ ՀԷՑ-ից հետո սրանց ախորժակն իրոք բացվել է: Խաղաղության կարգախոսներով հանդես եկող քաղաքական ուժն իրականում Հայաստանը ներքաշել է մի նոր պատերազմի մեջ, որն առերեւույթ տնտեսական է՝ Ռուսաստանի ձեռքից խլել Հայաստանում ունեցած պետական եւ մասնավոր սեփականությունը, բայց ամեն մի տնտեսական պատերազմ ի վերջո վերածվում է ռազմականի, որովհետեւ իրեն հարգող ոչ մի երկիր հենց այնպես չի զիջում իր եւ իր քաղաքացիների ունեցվածքը: Նիկոլ Փաշինյանի, Ալեն Սիմոնյանի եւ մյուսների անպատժելիության համոզմունքը հիմնված է Արեւմուտքի գործիքը լինելու վրա. Արեւմուտքը եւ մեր տարածաշրջանում Արեւմուտքի օպերատոր Թուրքիան ավելի ուժեղ են, քան Ռուսաստանը, ուրեմն մեզ ամեն ինչ կարելի է:

Նախ՝ ինչո՞ւ պետք է ռուսական կողմը ներդրում անի մի նախագծում, որը փող չի բերելու, որեւէ երաշխիք չկա, որ այդ ներդրումը հետ է վերադառնալու: Հայաստանի իշխանությունը պահանջում է, որ «Հարավկովկասյան երկաթուղիներ» ընկերությունն իր հաշվին վերանորոգի Հայաստանը Թուրքիային եւ Ադրբեջանին կապող երկաթուղու անբարեկարգ հատվածները: Կոնկրետ թիվ չասեմ, բայց դա միլիոնավոր դոլարներ է պահանջում: Ենթադրենք՝ ռուսները վերանորոգեցին երկաթուղին, իսկ ո՞վ է երաշխիք տալիս, որ այն գործելու է՝ Թուրքիան, թե՞ Ադրբեջանը: Գուցե Նիկոլ Փաշինյանը կամ Ալեն Սիմոնյանը, բայց ի՞նչ արժե այդ մարդկանց տված երաշխիքը՝ զրո, մի բան էլ դրանից պակաս: 4 տարի շարունակ Թուրքիան Նիկոլ Փաշինյանի եւ նրա իշխանության այլ ներկայացուցիչների քթից բռնած ֆռռցնում է՝ համոզելով, որ շուտով սահմանը բացվելու է: Նիկոլ Փաշինյանն ուղիղ չորս տարի առաջ՝ 2022 թվականի հունիսին, հայ-թուրքական սահմանից սկիզբ առնող ճանապարհի վերանորոգման աշխատանքներին մասնակցող շինարարներին հորդորում էր արագացնել աշխատանքները, որ երբ սահմանը բացվի՝ նորոգված ճանապարհ լինի: Այդ ճանապարհը, ինչպեսեւ փաշինյանական իշխանության օրոք վերանորոգված այլ ճանապարհներ, արդեն քանդվում են, նոր վերանորոգման կարիք ունեն, բայց սահմանը չի բացվել: Հայաստանը միլիոններ ծախսեց՝ մաքսատուն կառուցեց այդ ճանապարհի վրա, տարբեր պատվիրակությունների տարան-բերեցին, ցույց տվեցին, թե ինչ հսկայական գործ են արել, բայց՝ անարդյունք: Մաքսատունը եւս քանդվում է, ինչպես ցանկացած չշահագործվող կառույց: Փաշինյանական իշխանությունը մսխեց Հայաստանի բյուջեի փողերը, ծախսեց մի բանի վրա, որը չի աշխատում: Հիմա նույն ձեւով ուզում են, որ ռուսական ընկերությունը միլիոններ ծախսի երկաթգծի վերականգնման վրա, երբ այդ երկաթգիծը չի աշխատելու: Ո՞վ է փոխհատուցելու ռուսների կատարած ներդրումները, հարցը միայն փողը չէ, այլ՝ արժանապատվությունը:

Երբ դու ինչ-որ մեկի հետ որեւէ հարցի շուրջ պայմանավորվածություն ես ձեռք բերում, երբ կատարում ես պայմանավորվածության քո մասը, իսկ դիմացինդ չի կատարում, եւ դրանից հետո գնում եւ նույն կողմի հետ այլ հարցի շուրջ ես սկսում բանակցել, իբրեւ թե պայմանավորվել, ուրեմն դու իրավունք ես տալիս, որ քեզ դնեն հիմարի հետ: Հայաստանի իշխանություն կոչվածները Թուրքիայի հետ 4 տարի առաջ պայմանավորվել էին, որ ամենասեղմ ժամկետում հայ-թուրքական սահմանը կբացվի երրորդ երկրների քաղաքացիների եւ դիվանագիտական անձնագիր ունեցողների համար, 4 տարի թուրքական կողմը խաբեց

եւ այդպես էլ չբացեց սահմանը, նույնիսկ նման խիստ սահմանափակումներով, բայց դրանից հետո հայկական կողմը սկսեց բանակցել իբրեւ թե երկաթուղին բացելու շուրջ: Սա մի՞թե ինքնասիրության եւ արժանապատվության պակասից չէ: Ալեն Սիմոնյանը կարող է իրեն նման բան թույլ տալ, ռուսները չեն ուզում, որ թուրքերն իրենց հետ այդպես վարվեն:

Ռուսաստանի եւ Թուրքիայի ու Ադրբեջանի միջեւ տարբերությունն այն է, որ Ռուսաստանը ճանաչում է Հայաստանը որպես պետություն, ճանաչում է Հայաստանի իրավունքը, Թուրքիան եւ Ադրբեջանը չեն ճանաչում: Թուրքիան, էլ չենք խոսում Ադրբեջանի մասին, Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ չի հաստատել, սա Հայաստանը չճանաչելու ամենահստակ արտահայտությունն է, որքան էլ ՔՊ-ականները հակառակը պնդեն: Խաղաղության պայմանագիր ստորագրել-չստորագրելը երկիրը եւ դրա գոյությունը ճանաչելու հետ ոչ մի կապ չունեն: Ճապոնիան եւ Ռուսաստանը 1945 թ. պատերազմից հետո տարածքային վեճերի պատճառով խաղաղության պայմանագիր չեն ստորագրել, բայց դա չի խանգարել նրանց դիվանագիտական հարաբերություններ հաստատել: Եվ երբ Հայաստանի իշխանությունը գիտակցված Հայաստանը տանում է Ռուսաստանի դեմ տնտեսական եւ աշխարհաքաղաքական բախման, նրա նպատակը միայն մեկը կարող է լինել՝ Հայաստանի պարտությունը եւ ոչնչացումը, Հայաստանի հանձնումն Ադրբեջանին եւ Թուրքիային, մի բան, որ նրանք հաջողությամբ արեցին Արցախի դեպքում, հիմա էլ հաջողված փորձն ուզում են կրկնել Հայաստանի մասշտաբով:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ԵՎ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ԽՈՍԵԼՈՒ ՏԵՂ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՔԱՐՈԶԻՉՆԵՐԸ ՉՈՒՆԵՆ

Հայաստանում, հատկապես՝ իշխանությունների կողմից, ակտիվորեն շրջանառվում է այն թեզը, որ եթե մարդը չի ապրում Հայաստանում, իր ապագան Հայաստանի հետ չի կապում, երեխաները եւ թոռները Հայաստանում չեն ապրում, եւ Հայաստանն ընկալվում է որպես, օրինակ, նախնիների երկիր, ապա նա բարոյական իրավունք չունի Հայաստանում մասնակցելու ընտրություններին, նույնիսկ եթե պահպանել է ՀՀ քաղաքացիությունը:

Իմ խորին համոզմամբ՝ սա կեղծ ու վնասակար թեզ է: Նախ, որովհետեւ բարոյական իրավունք ասվածն ինքնին անհասկանալի կատեգորիա է: Կա իրավունք, օրինակ՝ սահմանադրականորեն երաշխավորված իրավունք, եւ վերջ: Եթե մարդը ՀՀ քաղաքացի է, ապա, անկախ այն բանից, թե որտեղ է բնակվում, նրա սահմանադրական իրավունքները չեն սահմանափակվում, ներառյալ՝ նաեւ ընտրական գործընթացներին մասնակցելու իրավունքը: Հետեւաբար, ցանկացած հակառակ կարծիք արդեն քաղաքական շահարկում է՝ գործող իշխանությունների շահերը սպասարկելու միտումով արված: Եթե բարոյականությանն անդրադառնանք, ապա շատ ավելի անբարոյական են, օրինակ՝ «ինչու դու պատերազմում չես զոհվել» թեզի գեներացումն ու շրջանառության մեջ դնելը կամ մարդկանց կրոնական զգացումները վիրավորելը, երբ ցանկացած խնդրի կարգավորման բնականոն ու ընդունված տարբերակներ եւ ընթացակարգեր կան: Ու այսպիսի բազմաթիվ թեզեր, որոնք հատկապես 20 թվականի 44-օրյա պատերազմից հետո գեներացվել ու ներդրվել են մեզանում, որոնց հետ ստիպված ենք եղել առերեսվել թե՛ Հայաստանում, թե՛ դրսում:

Բացի այդ, դրսում ապրող բազմաթիվ հայեր, ովքեր պահպանել են ՀՀ քաղաքացիությունը, Հայաստանում ունեն շարժական կամ անշարժ գույք, բանկային հաշիվ կամ ավանդներ, բիզնեսներ ու ներդրումներ, որոնց համար կատարում են որոշակի հարկային եւ այլ պարտավորություններով պայմանավորված վճարումներ:

Այսինքն՝ ինչ-որ ձեւով մասնակցում են Հայաստանի պետական բյուջեի գոյացմանը, եւ դա արդեն իսկ նրանց «բարոյական իրավունք» է վերապահում՝ լիարժեքորեն մասնակցելու Հայաստանում առաջիկա հինգ տարիների իշխանության ձեւավորման պրոցեսին: Չենք խոսի տարբեր հիմնադրամներին ու ծրագրերին դրամ ուղարկելու, համազգային հանգանակություններին մասնակցելու, պատերազմի ժամանակ օգնություն ցուցաբերելու կամ նմանատիպ այլ բաների մասին, համարելով, որ դա բարի գործ է, որն արվել է Աստծո առաջ, ու, վերջին հաշվով, գնահատողն Աստված է: Ոչ էլ կշեշտենք, որ Ռուսաստանից, օրինակ, Հայաստան տարեկան դրամական փոխանցումների՝ տրանսֆերտների ծավալը 4 միլիարդ դոլար է, ու, անկախ նպատակից, ամեն դեպքում, դա ծախսվում է Հայաստանում, «ներարկվում» է Հայաստանի տնտեսության մեջ եւ կարելի է համարել հենց ռուսաստանաբնակ հայության մասնակցություն Հայաստանի տնտեսական կյանքին: Եվ եթե խիստ բարոյականությանը նայենք,

ապա ինչքա՞ն բարոյական կգնահատեն այս թեզի ջատագովներն այն, որ Գնել Սանոսյանի եւ Լուսինե Բաղալյանի որդիները հիվանդության հիմքով ազատվել են բանակից, բայց շարունակում են զբաղվել պրոֆեսիոնալ սպորտով: Եվ եթե սա արդարացնում եք ու անբարոյական չեք համարում, ապա ավելի քան աբսուրդային է սփյուռքում բնակվողների ընտրական իրավունքի իրացումն անբարոյական համարելը:

Սերոբ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՇԱՏ ԵՐԿՐՆԵՐ ՈՒՇԱԴԻՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՑԻՆ ՁԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԴԱՍԵՐ ՔԱՂԵՑԻՆ

*«Հրապարակի» զրուցակիցն է ՆԱՏՕ-ի ռազմական ինստրուկտոր **Էֆտիմիս Տուրտիդիսը**:*

- Նիկոլ Փաշինյանը հայտարարում է, որ Արցախյան հակամարտությունն այլեւս փակված է, ավարտված է, եւ խաղաղությունը փաստ է: Հայ-ադրբեջանական հակամարտությունն իսկապե՞ս ավարտված է:

- Իմ մասնագիտական տեսանկյունից չեմ կարող ասել, որ հակամարտությունն ամբողջությամբ ավարտված է: Միգուցե պատերազմը կանգնեցված է այս պահի դրությամբ, բայց դա չի նշանակում, որ հակամարտության պատճառն անհետացել է: Հարավային Կովկասը միշտ անկայուն է եղել, եւ Հայաստանում էլ իրերի դրությունը կարող է փոխվել շատ արագ: Հենց այդ պատճառով էլ կարծում եմ, որ Հայաստանը պետք է շատ ուշադիր, զգույշ լինի եւ պատրաստված: Եվ սա ամենեւին պատերազմ ցանկանալու մասին չէ, ոչ ոք պատերազմ չի ուզում: Ընդհակառակը՝ դա այս տարածաշրջանի իրականությունը գիտակցելու եւ կեղծ խաղաղության զգացողություն չստեղծելու մասին է: Երկիրը, պետությունը պետք է միշտ պատրաստ լինեն պաշտպանել իր մարդկանց ու իր սահմանները: Ուժեղ պաշտպանությունը, ռազմական պատրաստվածությունը, մարզումներն ու ազգային միասնականությունը նաեւ այսօր շատ մեծ նշանակություն ու կարեւորություն ունեն: Ես հավատում եմ, որ խաղաղություն հնարավոր է, սակայն խաղաղությունը պաշտպանում են ուժի, պատրաստվածության եւ լուրջ ռազմավարական մտածողությամբ, ոչ թե քաղաքական հայտարարություններով: Բոլորս էլ խաղաղություն ենք ուզում, սակայն նաեւ պետք է իրատես լինենք տարածաշրջանի անվտանգային իրավիճակների հետ կապված: Պատրաստվածությունն ագրեսիա չէ. մեծագույն սխալը, որ կարող է անել ժողովուրդը՝ ժամանակավոր հանգստությունը մշտական խաղաղության հետ շփոթելն է:

- Հնարավո՞ր է խաղաղություն ապահովել խաղաղության պայմանագրի կամ որեւէ այլ ստորագրված փաստաթղթի միջոցով:

- Խաղաղության պայմանագիրը կարեւոր է, բայց չեմ կարծում, թե միայն փաստաթուղթը կարող է երաշխավորել խաղաղություն: Պատմության ընթացքում բազմաթիվ անգամներ ականատես ենք եղել ստորագրված փաստաթղթերով ձեռք բերված համաձայնությունների, սակայն խնդիրները շարունակել են մնալ: Իրական խաղաղությունը ժամանակ է ուզում: Դա պահանջում է վստահություն, կայունություն եւ լրջագույն ջանքեր երկու կողմից էլ: Հայաստանի դեպքում սա նշանակում է, որ մենք պետք է աջակցենք դիվանագիտական բլոկին, բայց միեւնույն ժամանակ լինել պատրաստված եւ զգուշավոր: Անվտանգությունը չի կարող հիմնված լինել միայն թղթի վրա գրված բառերի վրա ՝ փաստաթուղթը կարող է ստորագրվել մեկ օրվա ընթացքում, իրական խաղաղությունը շատ ավելի երկար ժամանակ է պահանջում: Դրա համար էլ պատրաստվածությունը բանալի բառն է՝ այս պարագայում:

- Ինչպե՞ս կարող է Հայաստանն ապահովել եւ պահպանել իր խաղաղությունը: Որո՞նք են հիմնական ուղիները:

- Իմ կարծիքով, Հայաստանը կարող է պաշտպանել ու պահպանել խաղաղությունը՝ լինելով իրատես եւ պատրաստված: Դիվանագիտությունը կարեւոր է, սակայն անվտանգությունն ամենակարեւորն է այս պարագայում: Հայաստանը պետք է շարունակի զարգացնել իր պաշտպանողական համակարգերը, սահմանային անվտանգությունը եւ ռազմական պատրաստվածությունը: Այս տարածաշրջանում որեւէ պետություն չի կարող իրեն թույլ տալ չափազանց հանգիստ լինելու շռայլություն: Ազգային միասնականությունը եւս կարեւոր է: Երբ հասարակությունն ուժեղ է եւ կայուն, պետությունն էլ է ուժեղանում, որպես կանոն: Միեւնույն ժամանակ, Հայաստանը պետք է շարունակի կառուցել միջազգային հարաբերություններ եւ դիալոգ, սակայն առանց անտեսելու հնարավոր ռիսկերն ու մարտահրավերները: Խաղաղությունը հեշտ է պահել, երբ երկիրը պատրաստ է ինքն իրեն պաշտպանել: Երկիրը խաղաղությունը պահում է ոչ միայն խոսքերով, այլ նաեւ կայունությամբ ու պատրաստվածությամբ:

- Հիմա ի՞նչ պատերազմներ են մղվում, զինված ուժերում համակարգային ի՞նչ փոփոխություններ է պետք անել:

- Պատերազմներն այսօր նման չեն անցյալի պատերազմներին: Տեխնոլոգիաները փոխել են ամեն ինչ: Հիմա մենք տեսնում ենք դրոններ, կիբեռհարձակումներ, պատերազմի էլեկտրոնիկ գործիքներ եւ տեղեկատվական օպերացիաներ, որոնք կիրառվում են միաժամանակ՝ զինված ուժերի հետ: Հակամարտությունը կամ կոնֆլիկտը կարող է սկսվել սկզբում առանց մեծաթիվ բանակների շարժի, երբեմն տեխնոլոգիաների միջոցով, մեդիայի եւ ենթակառուցվածքների վրա գրոհներով: Հենց այս պատճառով էլ ՁՈՒ-ները պետք է հարմարվեն այս նոր փոփոխություններին: Արագությունը, ինտելեկտը, ճկունությունն այսօր ավելի կարեւոր են, քան երբեւէ: Բանակները պետք է սովորեն արագ արձագանքել եւ աշխատել ժամանակակից պայմաններում: Մարզումներն էլ են փոխվում: Զինվորներն այսօր պետք է հասկանան նոր տեխնոլոգիաների բնույթն ու մարտահրավերների նոր տեսակները, ոչ թե տիրապետեն միայն ավանդական կռվի առանձնահատկություններին: Ժամանակակից պատերազմներն ավելի համակարգային ու բազմաբնույթ են, եւ պետությունները պետք է պատրաստվեն հենց այդ իրականությանը: Պատերազմի դաշտն այսօր ոչ միայն հատակին է՝ գետնի վրա, դա նաեւ թվային է, տեխնոլոգիական եւ հոգեբանական:

- Այժմ զինված ուժերում սկսել են օգտագործել արհեստական բանականությունը: Ճի՞շտ է արհեստական բանականությանը դոմինանտ դեր տալը:

- Արհեստական բանականությունը կարող է օգնել զինվորականությանը բազմաթիվ հարցերում: Այն կարող է մշակել տեղեկատվությունն ավելի արագ, լավացնել վերահսկողությունը եւ օգնել բանակին՝ արձագանքել արագ: Սակայն չեմ կարծում, թե ռազմական գործում ամբողջությամբ արհեստական բանականության վրա հենվելն անվտանգ է: Ի վերջո, պատերազմն ու անվտանգությունը մարդկային կյանքերի հետ են առնչվում: Կարեւորագույն որոշումները պետք է կայացվեն մարդկանց կողմից ու նրանց վերահսկողությամբ: Տեխնոլոգիաները կարող են սխալներ թույլ տալ, համակարգը կարող է տապալվել, ձախողվել, տեղեկատվությունը կարող է մանիպուլացվել: Արհեստական բանականության կարեւորությունն ի վերջո ապագայում կաճի, սակայն ես հավատում եմ, որ այն պետք է աջակցի ռազմական անձնակազմին, ոչ թե փոխարինի նրան: Տեխնոլոգիան կարեւոր է, սակայն պատասխանատվությունը պետք է մնա մարդկանց դաշտում:

- Ի՞նչ պետք է անի ՀՀ կառավարությունը՝ հայկական զինուժը նոր մակարդակի բարձրացնելու համար:

- Կառավարությունը պետք է շարունակի կատարելագործել զինված ուժերը եւ պատրաստել դրանք ժամանակակից մարտահրավերներին: Այսօրվա պատերազմները փոխվում են, ուստի բանակը նույնպես պետք է փոխվի: Ավելի լավ պատրաստվածությունը, ժամանակակից սարքավորումները, անօդաչու թռչող սարքերը, հակաօդային պաշտպանությունը եւ ավելի ուժեղ կազմակերպվածությունը՝ այս ամենը կարեւոր է: Միեւնույն ժամանակ, զինվորներին անհրաժեշտ է աջակցություն, կարգապահություն եւ լավ ղեկավարություն: Հզոր բանակը կառուցվում է քայլ առ քայլ՝ նախապատրաստական եւ լուրջ աշխատանքի միջոցով: Բանակը պետք է պատրաստվի վաղվա սպառնալիքներին, այլ ոչ թե երեկվա պատերազմներին:

- Հայաստանին հարեւան երկրների կողմից ռազմական սպառնալիքի վտանգ կա՞:

- Կարծում եմ՝ Հայաստանը դեռեւս մտահոգություններ ունի տարածաշրջանում անվտանգության վերաբերյալ: Հարավային Կովկասում իրավիճակը դեռեւս զգայուն է, եւ այդ պատճառով երկիրը պետք է զգույշ լինի: Սա չի նշանակում, որ անպայման հակամարտություն կլինի, բայց Հայաստանը չի կարող անտեսել հնարավոր ռիսկերը: Յուրաքանչյուր երկիր պետք է մտածի իր անվտանգության մասին եւ պատրաստ լինի: Հատկապես այս տարածաշրջանում կայունությունը երբեք չպետք է ինքնըստինքյան ընդունվի: Զգույշ լինելը վախ չէ, այն պատասխանատվություն է:

- 2020-ի պատերազմում Հայաստանը ռազմական գիտության տեսանկյունից պարտվեց: Ադրբեջանը կարողացա՞վ իրականացնել իր առջեւ դրված խնդիրները:

- Ռազմական տեսանկյունից Հայաստանը պարտվեց 2020-ի պատերազմում, Ադրբեջանը կարողացավ հակամարտության ընթացքում հասնել իր նպատակներից շատերին: Պատերազմը ցույց տվեց, որ ժամանակակից պատերազմը շատ է փոխվել: Անօդաչու թռչող սարքերը, տեխնոլոգիաները, հետախուզությունը եւ համակարգումը մեծ ազդեցություն ունեցան մարտադաշտում: Հայաստանի համար պատերազմը նաեւ դաս էր: Այն ցույց տվեց, թե որտեղ են անհրաժեշտ բարելավումներ՝ մարզումների, նախապատրաստման, կազմակերպման եւ արդիականացման մեջ: Շատ երկրներ ուշադիր ուսումնասիրեցին այդ պատերազմը, քանի որ այն ցույց տվեց, թե ինչպես են այսօր ընթանում ժամանակակից հակամարտությունները: 2020 թ. պատերազմը ցույց տվեց, որ ժամանակակից տեխնոլոգիաները կարող են շատ արագ փոխել հավասարակշռությունը մարտադաշտում:

- Պատերազմը, ըստ Ձեզ, ավարտվա՞ծ է Հայաստանի համար:

- Կռիվները դադարել են, բայց տարածաշրջանում խնդիրներ դեռեւս կան: Իհարկե, մարդիկ խաղաղություն են ուզում: Ոչ ոք չի ուզում եւս մեկ պատերազմ: Բայց Հայաստանը դեռ պետք է զգույշ եւ պատրաստ մնա, քանի որ ապագան մնում է անորոշ: Այժմ այն ավելի շատ նման է դադարի, քան վերջնական ավարտի:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ԴԻԼԻՋԱՆԻ ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻՆ ԱԶԱՏԵԼ ԵՆ

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Հունիսի 3-ին Դիլիջան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արման Բազինյանը որոշել է հունիսի 5-ից «Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» համայնքային ոչ առեւտրային կազմակերպության տնօրեն Հայկ Մնացականյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով 2026 թ. փետրվարի 20-ին կնքված աշխատանքային պայմանագիրը: Որպես որոշման հիմք՝ նշված է Հայկ Մնացականյանի դիմումը: Դիլիջանցիներն ասում են, որ Հ. Մնացականյանը լավ աշխատող է, սակայն աղբահանությանը հատկացված ռեսուրսները, հավաքարարների աշխատավարձն անբավարար են՝ քաղաքի սպասարկումը պատշաճ իրականացնելու համար: Դիլիջանը շարունակում է մնալ կեղտոտ քաղաք, այդ վիճակից բողոքում են տեղի բնակիչները, քաղաքի հյուրերն ու զբոսաշրջիկները: Հիմա՝ ամռանը, քաղաքում աղբահանությունը վատ է կատարվում: Դիլիջան համայնքի աղբավայրը գտնվում է միջպետական ավտոճանապարհի եզրին, այն ցանկապատված չէ, այնտեղ դիլիջանցիների կովերն են արածում՝ սնվելով թունավոր նյութերով: Աղբավայրում հաճախ հրդեհներ են լինում, ծուխը պատում է միջպետական ավտոճանապարհը, հասնում մինչեւ քաղաք:

ԻՆՉ ԽՈՐՀՈՒՐԴ՝ ԵԿՈՂ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

ԲԱՑ ԴԱՍԱԿ

Գրեթե օր չմնաց, անցավ չարչարանաց չորս շաբաթը, արդեն ակնհայտ է, որ դու գալիս ես՝ քո սպասման հիվանդ ժողովրդի կանչով: Ուստի մտածեցի մի քանի մտքերով կիսվել քեզ հետ՝ չհավակնելով իմաստունի կեցվածք ընդունել, այլ լինել քո ղեկավարելիք Սուրբ երկրի մի պարզ քաղաքացի, որն անցել է փորձառությունների միջով եւ հավատարիմ է մնացել մեր նախնյաց սուրբ ավանդույթներին: Ուսումնասիրել, ճանաչել է մեր հնագույն ազգի ստեղծած քաղաքակրթությունը եւ հիմա ասելիք ունի քեզ՝ Եկողիդ: Եվ ասելիքս փորձեցի տեղավորել ինը խորհուրդների մեջ, քանզի ինը թիվը ոչ միայն հին աշխարհում, այլ նաեւ հայոց հին տոմարով համարվում է սրբազան: Ուստի խնդրում եմ ուշադիր հետեւես խոսքիս:

ԽՈՐՀՈՒՐԴ ԱՌԱՋԻՆ

Քեզ մի շրջապատիր անձնապաստան, ստախոս եւ սիրաշահող պաշտոնյաներով, որոնց նպատակն անձնական շահն է, իսկ պետության հանդեպ՝ անտարբերությունը, որը հոգեւոր հանցագործություն է՝ ոչ միայն քո նպատակներն իրականացնելու ճանապարհին, այլեւ հանցագործություն է հայրենիքի հանդեպ, մեր սուրբ նահատակների հիշատակի հանդեպ, մեր զավակների հանդեպ:

Դու գալիս ես, երդվում եմ Արարատով, հավատում եմ, որ մեծ երազանք ունես: Եվ մի թող, որ ինքնամեծար անտարբերները խաթարեն քո լուսավոր տեսիլքը, քանզի սուտն ու անտարբերությունը երաշտեն, ամեն լուսավոր ծրագիր ամայացնող: Իսկ դու գալիս ես մեր ազգային ինքնությունը պահպանելու, պաշտպանելու երկրի անվտանգությունը:

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Տեր կանգնիր մեր ազգի էությանը, որ անցել է հազարամյակների միջով՝ ստեղծելով բացառիկ մշակույթ մարդկության համար: Տեր կանգնիր նաեւ քո անձնագրին, որն իր հանճարեղ Պատմությամբ հաստատել, կնիքել ու քեզ է նվիրել Մեծն Պատմահայրը՝ Խորենացին: Եվ եթե քո երազանքի ճանապարհին երբեմն սխալվես, ամոթ չէ ներողություն հայցել ժողովրդից: Գործ անողն է սխալվում, խոստովանությունը չի նվաստացնում ղեկավարին, այլ պատիվ է բերում նրան: Ցնցիր սուտը իշխանավորների բերանից եւ մի վախեցիր բամբասանքից, քանզի բամբասանքն ընդամենը ստախոսի, վախկոտի կապի ծառայությունն է: Եվ մի հալածիր, խնդրում եմ, նրանց, ովքեր քեզ հետ երբեմն համաձայն չեն: Քեզ համար ճշմարտությունը պետք է լինի մեկը՝ քո ղեկավարած երկրի շահը: Խնդրում եմ, միշտ հիշիր, որ տունը ներսից է մեծանում, ինչպես երկիրը մեծանում է ընտանիքից, եւ այդ ընտանիքը բարեկեցիկ կյանք է ուզում:

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՐՐՈՐԴ

Երբեք ինքդ մի խախտիր քո սահմանած օրենքները: Հիշիր Քեռի Թորոսի խորհուրդը Դավիթին, մեր էպոսում, երբ մի օր որսատեղից ուշ գիշերով վերադարձան, եւ քաղաքի դարպասներն արդեն փակ էին: Դավիթը ցանկացավ հրամայել պահակներին՝ բացել դարպասները, բայց քեռի Թորոսն արգելեց, ասելով՝ մի խախտիր քո սահմանած օրենքը, Դավիթ, որովհետեւ եթե դու խախտես, քո ենթակաները կսկսեն խախտել ամեն օր: Եվ նրանք դրսում՝ բաց երկնքի տակ գիշերեցին, մինչեւ որ լուսաբացին բացվեցին քաղաքի դարպասները: Մեր էպոսի այս պատկերը քարագիր է եւ օրինակ պետք է լինի բոլոր ղեկավարների համար:

ԽՈՐՀՈՒՐԴ ՉՈՐՐՈՐԴ

Երբեք թույլ մի տուր, որ քո հարազատներն ու մտերիմները քո անունից հրահանգներ տան մարդկանց, զբաղվեն անօրեն հովանավորչությամբ եւ փորձեն քո անունից ղեկավարել բնագավառներ: Խնդրում եմ՝ հիշիր Մեծն Նապոլեոն Բոնապարտի դառը խոստովանությունն աքսորում՝ Սուրբ Հեղինե կղզում, երբ նա թելադրում էր իր հուշերն իր հավատարիմ քարտուղար Լասկազին՝ պատմելով հարազատ եղբայրների արարքների մասին, որոնք եւ հեղինազրկել են իրեն՝ Կայսրին:

Հիմնավոր փոփոխության կարոտ է երկիրը, արմատական փոփոխության, որպեսզի ստիպված չլինենք ակվարիումի ջուրը փոխելու փոխարեն ձկներին դաստիարակել:

ԽՈՐՀՈՒՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Խնդրում եմ՝ երբեք չխախտես խոսքի եւ մամուլի ազատության օրենքը, որի հեղինակը, ինչքան էլ անսովոր հնչի այսօր, ես եմ՝ Ձեր խոնարհ բարեկամը: Օրենք, որն ընդունվեց 1991թ. հոկտեմբերի 16-ին, եւ օրն այդ Հայաստանում հռչակվեց Մամուլի ազատության օր: Թույլ մի տուր քո նախարարներին, պաշտոնյաներին՝ վիրավորել լրագրողներին եւ ազատ խոսքը: Բաց ու հասանելի եղիր քո ղեկավարած ժողովրդին: Հաճախ զրուցիր նրանց հետ, ինչն իշխանություն-ժողովուրդ միասնության հիմքն է եւ միասին մի ուղղությամբ նայելու հրաշալի հնարավորություն, քանզի, եթե ժողովրդի աչքից հեռու է ղեկավարը, սրտից էլ է հեռանում:

ԽՈՐՀՈՒՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Հայոց պատմությունն ու մեր ստեղծած հնագույն մշակույթը մեր երկրում այսօր վարձով ապրող տնվորի կարգավիճակում են: Եվ մենք, որ հյուսիսային ազգերի մեջ վեհագույնն էինք, լինելով մեծ ու հնագույն քաղաքակրթություն ունեցող, նետվել ենք պատմության լուսանցք, չենք գնահատում մեզ, մեր կերպը: Եվ չենք էլ կարողանում այնպես ներկայացնել աշխարհին, որ ուրիշներն էլ ճանաչեն ու գնահատեն մեր դերն ու տեղը համաշխարհային քաղաքակրթության մեջ: Չենք կարողացել եւ գլխահակ, գետնաքարշ քայլում ենք մեզնից սովորածների հետեւից: Ահա թե ինչ պիտի անի Եկողը: Նա պարտավոր է արթնացնել մեր մեջ մոլորված հավերժական հային եւ տեր դառնալ մեր ազգային հանճարին: Մեր հողի ամեն մի թիզը հռչակելով Սուրբ, իսկ ստեղծարար մեծերին՝ սրբազան այրեր:

ԽՈՐՀՈՒՐԴ ՅՈԹԵՐՈՐԴ

Մենք չկարողացանք օգտվել մեր ունեցած հոգեւոր եւ նյութական հարստությունից: Առաջինը բրոնզ, երկաթ, ապակի, մարտակառք, վարժեցրած նժույգ ստեղծողներս, ցորեն, գինի, գարեջուր ստեղծող հնագույն վարպետներս չկարողացանք մեզ եւ աշխարհին ճանաչել տալ մեր հանճարաստեղծ կերպը...

Օտար գիտնականները գրեցին, գրեցին, բայց տեսնելով, որ մենք տեր չենք կանգնում մեր ստեղծածին, դադարեցին հիշատակել: Քրիստոնեությունը պետականորեն առաջինն ընդունեցինք, բայց չկարողացանք պետականորեն տեր կանգնել աշխարհին ի ցույց, հակառակը՝ սկսեցինք հալածել հայոց Սուրբ Առաքելական Եկեղեցին: Մարդկության պատմության մեջ ամենածանր ողբերգությունը՝ Եղեռն ապրեցինք, բայց չկարողացանք աշխարհին ճանաչ դարձնել: Այնինչ մեր աչքի առաջ հրեաները իրենց կոտորածներն աշխարհով մեկ այնպես հռչակեցին, որ իրենց ցավը դարձրին համաշխարհային ողբերգություն եւ աշխարհից պետություն նվեր ստացան, իսկ մենք հայրենիք կորցրինք: Ո՞վ պետք է տեր կանգնի եւ աշխարհին ներկայացնի մեր կերպը, որպեսզի չլինի այնպես, որ մենք մնանք նվաստացած, գետնաքարշ եւ գոյատեւենք մեր կորուստների ու ցավի հետ հաշտ եւ օտար: Ո՞վ պիտի անի, վերադարձնի մեր ազգային արժանապատվությունը, ո՞վ, եթե ոչ Դու՝ Եկողդ:

ԽՈՐՀՈՒՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Ներիր, բայց դարձյալ հիշեցնում եմ. ազգը, որ քեզ ընտրել է, եւ ում եկել ես ղեկավարելու, երազանք ունի: Զգուշացիր, խնդրում եմ, դեմոկրատական ցանկասիրությամբ վարակված քարոզիչներից, նրանց խոսքն ընդամենը թորած ջրի ծփանք է, այնինչ մեզ ամուր, կայուն ազգային պետություն է պետք: Հիշիր նաեւ, որ քեզ են վստահելու բարին ու չարը կշռելու կշեռքը: Վստահ եմ, որ գիտես՝ ում ձեռքին կշեռքն է, նա իր քաշը չի զգում, ուստի կշռելուց զգույշ եղիր: Հիշիր նաեւ, որ քաշը ժամանակն է կշռելու՝ քո արած գործերի հանգույն:

ԽՈՐՀՈՒՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Ստեղծիր քո երկրի համար ամուր եւ հզոր պետությունների բարեկամություն: Հավատարիմ մնա քո խոսքին ու ստորագրությանը: Մի օտարացրու նրանց քեզնից, մի հեռացրու այնքան, որ կորցնես, եւ մի թող այնքան մոտիկ, որ քեզ կորցնես...

Ամրացրու բանակն ու սահմաններդ, հեռացրու քո ժողովրդից պատերազմի ստվերը: Հանուն սրբազան Արարատի՝ երբեք մի փորձիր զիջումներով շարժել թշնամուդ գութը, քանզի դրանով նրան չես դարձնի բարեկամ, այլ նրա պահանջները կավելացնես:

ՀԳ. *Ավարտելով գիրս՝ ուզում եմ հիշեցնել նաեւ, որ մենք միայնակ ազգ ենք, չունենք ոչ մի արյունակից ցեղ: Հնագույն ժամանակներում կար Շումերը, որ խոսում էր մեր հնախոս լեզվով եւ համաշխարհային պատմության մեջ թողնելով իր ոսկե հետագիծը՝ ժամանակների մեջ տարրալուծվեց արաբական աշխարհում: Մնացել են, թերեւս, միայն բասկերը՝ հեռու Իսպանիայում, ովքեր խոսում են մեր հնագույն բարբառներից մեկով, նույնիսկ ունեն Արարատ լեռ եւ Արաքս գետ: Այո, մենք մենավոր ազգ ենք, ինչպես Աստված է միայնակ...*

Եվ քանի որ այս մեծ աշխարհում մենք մենակ ենք, մեր մեծ կենսագրության եւ փոքրիկ երկրի հետ, պետք է շարունակենք պահպանել մեր չժանգոտվող ավանդույթները եւ ստեղծած քաղաքակրթությունը ու պիտի ձեւակերպենք մեր ինքնատիպ սահմանադրությունն ու օրենքները՝ մեր ազգի բնույթին ու պետության շահերին ներդաշնակ: Մենք փոքր երկիր ենք, բայց՝ մեծ ազգ, եւ կարող ենք ստեղծել երկրորդ խորհրդարանը՝ կոչելով այն համահայկական խորհրդարան, որի պատգամավորները կընտրվեն ավելի քան յոթ միլիոն մեր սփյուռքի հայրենակիցների համայնքներից: Կընտրվեն հինգ տարով եւ տարին երկու անգամ նիստ կգումարեն, երբ հանրապետության խորհրդարանն արձակուրդում կլինի: Ահա մի ճանապարհ Հայրենիք-Սփյուռք միասնության, երբ հայրենիքը նրանց փորձի եւ գիտելիքների կարիքն ունի: Ի դեպ, երկրորդ խորհրդարան՝ չի նշանակում երկրորդական խորհրդարան: Նրանց խոսքը, գիտելիքն ու փորձը կօգնեն մեր Հայրենիքն արագ ոտքի կանգնեցնել՝ Արարատ սրբազան լեռան հայացքի առաջ:

Այս ձեւի մեջ՝ առայժմ այսքանը:

Բարեկամաբար՝
Մերուժան ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

ՀԱՇՎԱՌՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

Անձնագրային եւ վիզանեռի վարչությունը մերժում է Հայաստանում գրանցման հասցե չունեցող, բայց ՀՀ քաղաքացիություն ունեցողներին լրացուցիչ ցուցակներում ընդգրկել, որպեսզի վերջիններս կարողանան մասնակցել ԱԺ ընտրությանը:

«Հրապարակ»-ին ՆԳՆ մամուլի քարտուղար **Նարեկ Սարգսյանը** հայտնեց, որ եթե անձը չունի հաշվառման հասցե, ապա, ըստ օրենքի, նրան առանց դատարանի որոշման չեն կարող ընդգրկել լրացուցիչ ցուցակում: «Նշված անձինք կարող են դիմել Անձնագրային եւ վիզաների վարչություն՝ լրացուցիչ ցուցակներում ընդգրկվելու համար, ստանալ մերժումը, այնուհետեւ մերժման հիմքով կարող են դիմել դատարան: Դատարանը պարտավորեցնում է, որ լրացուցիչ ցուցակում ընդգրկեն քաղաքացուն, ու նրանք ընդգրկվում են»,- ասաց նա՝ հավելելով, որ նախորդ ընտրությունների ժամանակ եւս նույն ընթացակարգով է տեղի ունեցել գործընթացը:

Դատական դեպարտամենտի մամուլի ծառայության ղեկավար Ծովինար Խաչատրյանն էլ մեզ հետ զրույցում հայտնեց. «Շաբաթ եւ կիրակի օրերին ընտրական իրավունքի վերաբերյալ գործերը կքննեն հիմնականում առաջին ատյանի վարչական դատարանը, ընդհանուր իրավասության դատարանները, Երեւանի առաջին ատյանի քաղաքացիական դատարանը: Դատարանները ծանուցված են հերթապահության մասին»:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԻՆՔՆԱԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՍԻՐԱՀԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Դանիել Իոաննիսյանը շատ սխալ ուղով է տանում Նիկոլ Փաշինյանին: Կարելի է ասել՝ քթից բռնած ման է տալիս դափնիների պուրակում, դրդում ինքնախաբեության: Դանչոն գիտի, որ ինքնախաբեությունն այն լավագույն միջոցն է, որով կարելի է զսպել Նիկոլ Փաշինյանի հանկարծահաս պոռթկումները, որոնք վարչապետի աթոռը կորցնելու վախի արգասիք են, ուրիշ՝ ոչինչ: Դանչոն Փաշինյանին սառը ջուր հասցնելու մեծ վարպետ է, ինչը չի կարելի ասել Նիկոլի նույնիսկ ամենամերձավոր շրջապատի որեւէ ՔՊ-շնիկի մասին: ՔՊ-շնիկները, հատկապես վերջին շրջանում, Նիկոլին ավելի շատ նյարդայնացնում են, քան՝ հանգստացնում: Անցած ութ տարիների խայտառակությունը քիչ էր, հիմա էլ էս ձախողված քարոզարշավն ու Պետոյի մոտ դրանց անփառունակ «նահատակությունները»: Ինչքա՞ն պիտի Նիկոլը ծամի, որ կարողանա հանրությանը միայնակ ապացուցել, որ ամեն ինչ նորմալ է, ինքն էլ՝ չաղ ու բախտավոր: Չի ստացվում, մարդիկ չեն հավատում, երբ Նիկոլի կողքին որեւէ՝ անկախ իր պաշտոնից ու դիրքից, ՔՊ-շնիկ են տեսնում: Նիկոլն էլ մարդ է, չէ՞, ի վերջո, նյարդայնանում է: Բա ինքն այսքան բան անի, ու մի Ալեն Սիմոնյան, մի Արարատ Միրզոյան ամեն ինչ փչացնե՞ն:

Դուք Դանիել Իոաննիսյանին Նիկոլի կողքին չեք տեսնի: Հնարավորինս հեռու է «ֆոֆռում», որ իր կերպարով վարչապետի կերպարը չնսեմացնի: Եվ Դանչոյի այդ վարքը դուր է գալիս Նիկոլին: Տեսեք՝ անգամ Աննային է դատի տվել Դանչոն, բայց Նիկոլը նրան որեւէ նկատողություն չի անում: Չի նախատում նրան, որովհետեւ կարող է զրկվել նրա ծառայություններից ու ինքնախաբեության հասցնող հնարքներից:

Եվ, ուրեմն, ի՞նչ է անում Դանչոն: Նա նկարում է ընդդիմության հանրահավաքներն ու այդ լուսանկարներն ուղարկում Նիկոլին: Իսկ Նիկոլը կառավարության ամառանոցում աչքի է անցկացնում դրանք եւ հանգիստ շունչ քաշում՝ մարդ չկա: Ու, Աստված չանի՝ այդ պահին Ալենը ներս ընկնի, թե՝ կորած ենք, շեֆ, ամեն ինչ գնաց գրողի ծոցը, հրապարակը լեփ-լեցուն է մարդկանցով: Ալենին «տռաս կհանի» ու կշարունակի թերթել Դանչոյի ուղարկած «վավերագիր»-լուսանկարներն ու ինքնախաբվել:

Ի՞նչ կարելի է խորհուրդ տալ Նիկոլին այս դեպքում: Հիմա կասեք՝ նրան խորհուրդներ տալու ժամանակն անցել է… Գուցե: Բայց մի բան, այնուամենայնիվ, պետք է անել: Մտածում եմ՝ Նիկոլին հիշեցնել 44-օրյա պատերազմի մասին Արծրուն Հովհաննիսյանի հոգեպարար երգերը, որոնք ինքնախաբեության էին դրդում ոչ միայն իրեն՝ Նիկոլին, այլեւ մի ողջ ժողովրդի… Հօդս ենք ցնդեցնում, զգետնում ենք, «գյոռբագյոռ» ենք անում… Հաղրութի մասին էլ, հիշո՞ւմ եք, մի հայրենասիրական երգ էր գրել՝ ես հիմա Հաղրութում եմ, եւ այստեղ ոչ մի թուրք չկա:

Դանիել Իոաննիսյանի լուսանկարները, ընդդիմության հավաքները հնարավորինս սակավամարդ ցուցանելուց զատ, մի բացասական կողմ էլ ունեն, որ Նիկոլը չի նկատում: Այդ լուսանկարներից չի երեւում, թե ինչու է ընդդիմությունը հավաքվել կամ ինչ է ուզում ընդդիմությունը՝ առհասարակ: Հանրահավաքի բովանդակությունը չկա, բացակայում է լուսանկարներից: Լավագույն օրինակը «Ուժեղ Հայաստանի» հունիսի 3-ի հանրահավաքի լուսանկարներն են: Տարբեր փողոցներով ընթացող երթը դեռ հրապարակ չէր հասել, որ Դանչոն արդեն նկարել էր հրապարակն ու ուղարկել Նիկոլին, թե մարդ չկա, առավելագույնը՝ 17 հազար: Իսկ 17 հազարն ի՞նչ է Նիկոլի համար… Եվ այդ թվից արդեն Նիկոլն ինքնախաբվում է, սկսում հավատալ Դանչոյի ստեղծագործ տաղանդին: Իրականությունը, մինչդեռ, այն է, որ «Հայաստան» եւ «Ուժեղ Հայաստան» դաշինքների, ինչպես նաեւ՝ «Բարգավաճ Հայաստան»-ի հանրահավաքներում արդեն իսկ առկա է այն կրիտիկական զանգվածը, որ բավարար է՝ Փաշինյանի նման մի քանի վարչապետի գրողի ծոցն ուղարկելու համար: Դանչոյի լուսանկարներում դա չի երեւում: Չի երեւում նաեւ ընդդիմության հանրահավաքների բովանդակությունը, որն ըստ էության մեկ բանի մասին է՝ տակավին գործող խայտառակ իշխանությանը «տուն ուղարկելու»: Այս մասին Նիկոլին, իհարկե, զեկուցում են, բայց Նիկոլը, ինչպես ասացի, ինքնասիրահարվածի պես սիրահարվել է Դանչոյի լուսանկարներին եւ հաճույքով ինքնախաբվում է, չի ուզում հավատալ պարզ իրականությանը:

Մի փոքր էլ բացենք իրականությունը: Պարոն Փաշինյան, Դուք ասում էիք, որ եթե ժողովուրդը պահանջի, ռադներդ կքաշեք: Ձեր բառերն են: Այդ պահանջն այսօր ձեւակերպված է, հնչում է ընդդիմության բոլոր հանրահավաքներում: Եվ, ուրեմն, ինչո՞ւ եք ծամոնը ձգում մինչեւ ընտրություններ, հրաժարական չեք տալիս ու մարդավարի հեռանում: Անպայման ժողովուրդը պիտի ռմդանի, որ դրա համն էլ զգաք: Դուք ասում էիք՝ եթե ժողովուրդը որոշի, որ կանգնեմ գնդակահարության պատի տակ, ապա ես կկանգնեմ: Ընդդիմության հանրահավաքներում, ի դեպ, ժողովուրդը հենց դա է պահանջում, բայց որոշում կայացնելու որեւէ մեխանիզմ, ցավոք, դեռ չունի: Դանչոն էլ միտումնավոր Ձեզ այնպիսի լուսանկարներ չի ուղարկում, որոնցում արտացոլված լինի, թե ինչպես է երկրիս իրավապահ համակարգը «պաշարում ու հսկում» հրապարակները, որ այդ որոշումը հանկարծ չկայացվի:

Շարունակեք ինքնախաբվել, պարոն Փաշինյան, ի՞նչ ասեմ: Ամբողջ Հայաստանը ճիպոտով քշիր, բեր քո հանրահավաքին ու ինքնախաբվիր Դանչոյի՝ այդ պահի լուսանկարներով: Չմոռանաք, սակայն, բովանդակության մասին: Հանրահավաքը պետք է նաեւ բովանդակություն ունենա:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 5.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԼՐԱԳՐՈՂՆԵՐՆ ԱՅԺՄ ԱՆԵԼԻ՛Ք ՈՒՆԵՆ

Արա ԱԼՈՅԱՆ

«ՈՒԺԵՂ Հայաստան» դաշինքի առաջնորդ, ազգային բարերար Սամվել Կարապետյանը խոստովանում է՝ «հիացած է ուժեղ, հետաքրքիր կին լրագրողներով», ինչպես նաեւ՝ տպավորված է ԱԺ ընդդիմադիր կին պատգամավորների ակտիվ գործունեությամբ: Ավելի վաղ նա համոզմունք էր հայտնել. «Գալու է ժամանակ, որ հայ կինն է ղեկավարելու Հայաստանը»:

Այդ ժամանակը, վստահ եմ, գալու է, բայց ասելիքս այս անգամ վերաբերում է լրագրողական աշխարհին կամ, ինչպես ընդունված է անվանել՝ չորրորդ իշխանությանը: Նրա դերը չի կարելի թերագնահատել եւ ոչ մի ժամանակաշրջանում եւ ոչ մի երկրում ու հասարակության մեջ: Ճշմարիտ, բարեխիղճ լրագրողը հասարակության, ժողովրդի եւ կայացած նորմալ պետության խոսափողն է, ոչ թե սոսկ մեկը, որի ձեռքում խոսափող է: Գիտենք նաեւ, որ լրագրությունը հաճախ դառնում է քաղաքական կարիերայի ցատկահարթակ: Մասնագիտական հաղորդակցման հմտությունների, հասարակական գործընթացների ըմբռնման եւ լսարանի հետ աշխատելու ունակության շնորհիվ մասմեդիայի շատ ներկայացուցիչներ կարողացել են դառնալ պառլամենտականներ, երկրների ղեկավարներ, այն էլ՝ համաշխարհային ճանաչելիության. նախկին ռազմական թղթակցից Մեծ Բրիտանիայի լեգենդար վարչապետ դարձած Ուինսթոն Չերչիլ, նախկին լրագրողից ԱՄՆ նախագահ դարձած Ջոն Ֆիցջերալդ Քենեդի, նախկին լրագրողից ու խմբագրից Իտալիան առաջնորդած Մուսոլինի, եւ այդպես՝ մինչեւ մեր օրերը: Հարց է, թե նրանցից ով ինչպես է կառավարել, ինչով է նշանավորվել, ինչ հետագիծ է թողել:

Հայաստանն այս առումով, ցավոք, անփառունակ փորձառություն ունի, որը չարաբաստիկ մղձավանջի պես հետապնդում է բոլորիս 2018 թվականի այն պահից, երբ իշխանության եկավ նախկին լրագրող Նիկոլ Փաշինյանը: Իսկ նրան հեռացնելու համար, այո՛, այսօր առավել, քան երբեւէ, լրագրողական համայնքը գերխնդիր, գլխավոր անելիք ունի՝ համախմբվածությամբ աջակցելու նրա հեռացմանը: Անշուշտ, որ այլակարծություն եւ բազմակարծություն ունենալը, ինչպես նաեւ դրա ապահովումը հանրային կյանքի բոլոր ոլորտներում լրագրության գլխավոր նախապայմաններից են, եթե իրապես ձգտում ենք ժողովրդավարական երկիր կառուցել: Բայց երբ ժողովուրդն ու պետությունն օրհասական վիճակում են, «մեդիա-առաքյալները» պետք է ժամ առաջ ոչ թե միայն բարձրաձայնեն այդ մասին, այլեւ կոնկրետ մասնակցություն ունենան որոշում կայացնող գործընթացների վրա: Այս դեպքում բախտորոշ առիթը հունիսի 7-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններն են, որոնց նշանակությունը համաժողովրդական հանրաքվեի է վերածել, ընտրություն՝ ազգայինի եւ ապազգայինի, հաղթանակի եւ պարտության, նսեմացման եւ արժանապատվության, հայ մնալու եւ անհայրենիք օտարահպատակ լինելու միջեւ: Բայց արդյո՞ք թվարկվածներն առանձին-առանձին երբեւէ ու հիմա այլեւս նախընտրության, սակարկության, երկվության կարիք ունեն:

Հնարավոր չէ ընտրություն կատարել պարտության եւ հաղթանակի, բարոյականության եւ պատվազրկության միջեւ ճիշտ այնպես, ինչպես չեն ընտրում ծնողին, զավակին, Հայրենիքը: Եվ տեղին է հիշել նույն Չերչիլի հայտնի միտքը. «Երբ երկիրը պատերազմի եւ անպատվության (ստորացման) միջեւ ընտրում է անպատվությունը, ի վերջո ստանում է եւ մեկը, եւ մյուսը»: Իսկ մեր «պատերազմն» այսօր հոգեւոր-ազգային է, այն հանրային ու քաղաքական արդարացի ընդվզում է, որում մեծ ներդրում, իսկ այսօր արդեն գլխավոր անելիք ունեն նաեւ լրագրողները՝ չորրորդ իշխանությունը: Կարեւորի մասին նրանք արդեն վաղուց ասել են:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am